Azg Ազգ

21 ՅՈՒԼԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 134(4753)

ISSN: 1829-1651

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հանձնաժողովում հայանպաստ բանաձեւ է քննարկվում

ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը սկսել է քննարկել Թուրքիայում կրոնական ազատությունների վերաբերյալ թիվ 306 բանաձեւը, որի համահեղինակներն են հանրապետական Էդ Ռոյսն ու դեմոկրատ Հովարդ Բերմանը: Բանաձեւով Թուրքիայից պահանջվում է ազգային եւ կրոնական փոքրամասնություններին իրենց իրավունքներից ազատորեն օգտվելու հնարավորություն ընձեռել: Բանաձեւում սպասվելիք առաջարկները ներառելու դեպքում քրիստոնյա փոքրամասնություններին (այդ թվում՝ հայերին) պատկանող եկեղեցիների եւ եկեղեցական կալվածքների վերադարձ նույնպես ենթադրվում է: Քննարկումներին ներկա են Հայ առաքելական եկեղեցու Մ. Նահանգների զույգ թեմերի հոգեւոր առաջնորդները: Մ. Խ.

Օգոստոսին կառավարությանը կներկայացվի միգրացիոն ոլորտի «Ազգային ծրագիր»

Այս մասին երեկ լրագրողներին տեղեկացրեց տարածքային կառավարման նախարարությանը կից միգրացիոն պետական ծառայության ղեկավար **Գագիկ Եգանյանը** հանրապետության նախագահի մոտ անցկացրած խորհրդակցությունից հետո: «Միգրացիան դարձել է հասարակությանը հուզող հարց, հետեւաբար պատահական չէր այս քննարկումը», ասաց Եգանյանը: Միգրացիոն ծառայության ղեկավարը տեղեկացրեց նաեւ, որ դեռեւս անցյալ տարի կազմվել է ոլորտի հայեցակարգ, ինչը ներառում է շուրջ 100 գործողություն, օրինակ, սահմանային վերահսկողություն, անկանոն միգրացիայի կարգավորում, օտար պետություններում գտնվող քաղաքացիների վերադարձի հարցեր եւ այլն: «Նախագահին մենք զեկուցեցինք հայրենական միգրացիայի հիմնական երկու պատճառները, որոնք են աշխատանքի բացակայությունը եւ բավարար կենսապայմաններ ապահովող աշխատանքի բացակայությունը», նշեց Եգանյանը: Այդուհանդերձ՝ Միգրացիոն ծառայության ղեկավարի խոսքերով՝ ոլորտի առկա իրավիճակը «աղեսալի չէ». «2002-07-ը Հայաստանից հեռացել են ու մինչեւ հիմա չեն վերադարձել 150 հազար մարդ, ընդ որում, նրանց մի խումբը հեռացել է՝ նաեւ դուրս գալով հաշվառումից, մյուս խումբը սեզոնային մեկնողներն են, որոնք, սակայն, դեռ չեն վերադարձել, ինչը, անշուշտ, փաստ չէ, որ նրանք չեն վերադառնալու», նշեց Եգանյանը:

Հետաքրքրական է, որ 2008-ից հետո նման հեսազոտություններ չեն անցկացվել, ինչը, Եգանյանը պայմանավորեց այն հանգամանքով, որ դրանք անցկացվում էին հիմնականում միջազգային ֆինանսական աջակցությամբ, իսկ այս տարի արդեն նախատեսվում է անցկացնել նոր հետազոտություն՝ արդեն պետական բյուջեի ֆինանսավորմամբ. «Բացի այս նոր հետազոտությունից, շատ բան կիսակեցնի նաեւ այս տարի նախատեսված մարդահամարը», նշեց Եգանյանը:

Միգրացիոն ծառայության ղեկավարը նշեց նաեւ, որ նախագահը հանձնարարել է՝ բնակչությանը մշտապես իրազեկել ոլորտի իրավիճակի մասին. «Կարեւորվեց ոլորտում մեր նոր հետազոտության անցկացումը», ասաց Եգանյանը:

Ի դեպ Գագիկ Եգանյանի հարեւաններից ոչ ոք չի մեկնել արտերկիր. «Ընդամենը մի ընտանիք պարզապես փոխել է քաղաքում իր բնակության վայրը», ասաց նա՝ վստահեցնելով, որ «զանգվածային, աղետալի արտագաղթ Հայաստանում չկա»:

Հ. Ա.

ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

Ամսել Ֆիշեր. ԵՄԽՎ-ի ԼՂ հարցով ենթահանձնաժողովում չգիտեն ինչով են զբաղվելու

Պարտավորությունների կատարման ընթացքը գնահատելու եւ մեր երկրում առկա իրավիճակի վերաբերյալ ԵՄԽՎ զեկույց պատրաստելու համար Հայաստան պետք է այցելեին ԵՄԽՎ մոնիտորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցով համազեկուցողներ Ջոն Պրեսկոտն ու Ամսել Ֆիշերը: Սակայն Պրեսկոտը չի ժամանել, քանի որ ուշացել է ինքնաթիռից (Լոնդոն մեկնող այն գնացքի տակ, որի մեջ Պրեսկոտն է եղել, ինքնասպան է նետվել): Այնպես որ երեկ Ամսել Ֆիշերը միայնակ հանդիպեց Հայաստանի ԱԺ խմբակցությունների հետ (ՕԵԿ-ը չի եղել այդ հանդիպմանը)՝ խոսելով Հայաստանի վերաբերյալ աշնանը ներկայացվելիք զեկույցի մասին:

Ըստ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչության լրատվության՝ Ֆիշերն իր այցը լավ հնարավորություն է համարել՝ այդ զեկույցում Հայաստանի վերջին զարգացումները ներառելու համար. նա նկատի է ունեցել ե՛ւ ընտրական օրենսգրքի փոփոխությունները, ե՛ւ իշխանություն-ընդդիմություն երկխոսությունը (ահա թե ինչու էր հարկավոր իշխանություն-ՀԱԿ երկխոսության այս ամառային հանգրվանը-Մ.Խ.), որոնցում Ֆիշերը դրական պահեր է նկատել:

Տես էջ 2

Վրաց եկեղեցին պետության հետ արդեն քննարկում է ունեցվածքային հարցերը

Վրաստանում կրոնական համայնքներին որպես հանրային իրավունքի սուբյեկտ գրանցվելու հնարավորություն տվող օրենսդրական փոփոխությունների ընդունումից հետո վրաց պատրիարքարանի բարձրագրած աղմուկն ու բացասական արձագանքը հանդարտվելու միտումներ ցույց չեն տալիս: Ամեն դեպքում, վրաց պատրիարքարանը, առանձնակի չշեշտելով ունեցվածքային հարցերի կարեւորությունն իր համար, հանրության աչքին փորձում է զբաղվել իր կարգավիճակին որեւէ սպառնալիք թույլ չտալու մտահոգության հիմնավորմամբ:

Վրացական լրատվամիջոցները տեղեկացնում են, որ հիշատակված օրենսդրական փոփոխություններից հետո վրաց պատրիարքարանին խոստացված եւ ստեղծվելիք համատեղ հանձնաժողովը, որ պիտի զբաղվի եկեղեցական հարցերով, կկոորդինացնի Վրաստանի վարչապետ Նիկա Գիլաուրին: Վերջինիս հետ հանդիպումը Վրաստանի խորհրդարանական մեծամասնության եւ վրաց պատրիարքարանի սուրբ սինոդի ներկայացուցիչները համաձայնության են եկել հանձնաժողովը ձեւավորելու 12-ական անդամներով յուրաքանչյուր կողմից, ընդ որում՝ որոշումների ընդունման 2/3 կշռի հաստատմամբ:

Գիլաուրին տեղեկացրել է, որ հանձնաժողովը միավորելու է չորս հանձնաժողով՝ աշխատելով չորս հիմնական ուղղություններով: Մեկ հանձնաժողովը կզբաղվի արտերկրում վրաց եկեղեցու կարգավիճակի հարցերով: Երկրորդ հանձնաժողովը, որն, ըստ վարչապետի խոսքերի, արդեն իսկ փաստացի գործում է, կքննարկի ունեցվածքային հարցերը: Եվս մեկ հանձնաժողով կկարգավորի շինությունների, կառույցների եւ մշակութային հուշարձանների հարցերը, իսկ վերջին հանձնաժողովը կվերահսկի վրաց եկեղեցու հետ պետության կնքած սահմանադրական պայմանագրի կատարումը:

Բնավ էլ պատահական չէ, որ դեռեւս քննարկման փուլում, բայց արդեն իսկ մեկ ուղղությամբ պետություն-վրաց եկեղեցի հանձնաժողովն արդեն գործում է, նկատի ունեմ ունեցվածքային հարցերը:

Այդուհանդերձ, եթե անգամ հաշվի առնենք պետական չինովնիկների հայտարարությունները, թե վրաց եկեղեցու ունեցվածքը որեւէ մեկը չի վիճարկի, ապա այնքան էլ հստակ չէ, թե ինչու է ունեցվածքային հարցերով զբաղվելու մի հանձնաժողով, որի թեմատիկ հարցերից մեկն էլ Վրաստանում վիճահարույց ներկայացվող հայկական եկեղեցիների խնդիրն է լինելու: Եվ դա այն դեպքում, երբ այդ եկեղեցիները որեւէ առնչություն չունեն վրաց եկեղեցու հետ, այլ վաղուց արդեն գտնվում են Վրաստանի պետական հաշվեկշռում, այսինքն՝ դրանք Հայ առաքելական եկեղեցուն վերադարձնելու հարցը զուտ պետության խնդիրն է, այլ ոչ վրաց հոգեւորականների հետ հավասարազոր պայմաններում քննարկելիք թեմա:

Մյուս կողմից, այս համատեղ հանձնաժողովի ստեղծումը ակնհայտորեն ձգձգելու է Վրաստանի քաղաքացիական օրենսգրքում կատարված փոփոխություններից բխող քայլերը, որոնք բնականաբար վերաբերում են Վրաստանում կրոնական համայնքների ունեցվածքային հարցերին: Իսկ որ վրաց եկեղեցին հավակնություններ ունի թեմեր ունենալու այնպիսի վայրերում, որտեղ անգամ վրացի չկա, չխոսելով վրացական եկեղեցիների հզորության մասին, անհարմար վիճակի մեջ է դնում հենց վրաց եկեղեցուն, քանի որ որեւէ թեմ, անգամ ստեղծվելու դեպքում, ինքնանպատակ ու առանց հոտի երկար կյանք ունենալ չի կարող:

Ա.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խոշընդոտներ երկրաշարժից անօթեւան որոշ թվով ընտանիքների բնակարան ստանալու գործում

Աղետի գոտում երկրաշարժից անօթեւան ընտանիքների բնակապահովման ավելի քան երկու տասնամյակ ձգձգվելու պատճառով բնակարանի հավակնորդ շատ ընտանիքների հարցում առաջացել են մի շարք խնդիրներ, որոնք նրանց այսօր հնարավորություն չեն տալիս համալրել պահանջվող փաստաթղթերի փաթեթը եւ մասնակցել բնակարանների բաշխման գործընթացին: Մասնավորապես, անցած 23 տարիների ընթացքում բնակարանի շահառու շատ ընտանիքների ներսում ձեւավորվել են մեկից մինչեւ մի քանի նոր ընտանիքներ, որոնք սակայն, գործող կարգի համաձայն, միասին ստանալու են մեկ բնակարան, այն էլ՝ երկրաշարժին նախկին փորձ ընտանիքի կորցրած սենյակների քանակով:

Գյումրու «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության երեկ տարածած հաղորդագրության մեջ այս ՀԿ-ի նախագահ **Վահան Թումասյանը** նշում է, թե իրենց գրասենյակ են դիմում բազմաթիվ ընտանիքներ, որոնց կազմում հաշվառված մեկ կամ մի քանի անդամներ, համաձայնության չգալով ստանալիք բնակարանների ապագա պատկանելիության հարցում կամ ինչ-ինչ այլ դրդապատճառներով՝ հրաժարվում են ընտանիքի մյուս անդամներին տրամադրել իրենց անձնական փաստաթղթերը, ինչի պատճառով հնարավոր չի լինում ամբողջացնել բնակարան ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթը: Գյումրիում ներկայումս ընթացող բնակաբաշխման գործընթացին չեն կարողանում մասնակցել նաեւ այն 150 ընտանիքները, որոնք թեեւ երկրաշարժին բնակարան են կորցրել եւ մինչեւ օրս չեն փոխհատուցվել, սակայն անօթեւանների հերթացուցակում հաշվառված չեն: Կենտրոնի ուսումնասիրություններով՝ այդ ընտանիքների գերակշիռ մասը վերահաշվառման ժամանակ բացակայել են Հայաստանից եւ փաստորեն զրկված են բնակարան ստանալու իրավունքից, քանի որ աղետի գոտում երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած ընտանիքների հաշվառման կարգը սահմանող կառավարական որոշումներով անօթեւանների հերթացուցակում հաշվառվելու դիմումների ընդունման վերջնաժամկետ սահմանված է եղել 2008 թ. նոյեմբերի 1-ը:

Տես էջ 2

«Ազատության նավատորմիղի» միակ նավը կալանված է

«**Ազգ**»-ը գրել է, որ Գազայի հատվածի ծովային շրջափակման վերացման նպատակով Հունաստանից պետք է մեկներ ակտիվիստների եւ մարդասիրական բեռների «Ազատության նավատորմիղ», բայց միայն մեկ նավ թույլտվություն ստացավ եւ հուլիսի 17-ին մեկնեց դեպի Գազա: Խոսքը ֆրանսիական Dignity զբոսանավի մասին է: Երեկ ստացված տեղեկությունների համաձայն, նավի վրա կան պաղեստինամետ 17 ակտիվիստներ, որոնց մեջ են Ֆրանսիայի խորհրդարանի մի պատգամավոր եւ իսրայելցի մի լրագրող:

Ինչպես հաղորդում է newsru.co.il կայքը, Իսրայելի ծովուժի երեք ռազմանավեր Գազայի հատվածի մատույցներում կալանել են Dignity նավը: Անձնակազմը եւ ուղեւորները կալանավորված են: Հուլիսի 19-ի երեկոյան Dignity-ն տարվել է Աշդոդի նավահանգիստ (Իսրայել): Ընդգծվում է, որ նավում մարդասիրական բեռներ չեն եղել:

Ֆրանսիայի կառավարությունը երեկ Իսրայելին կոչ է արել պահպանել Dignity զբոսանավի ուղեւորների եւ անձնակազմի իրավունքները, ինչպես նաեւ նրանց թույլ տալ հնարավորինս շուտ տուն վերադառնալ:

Արաբական պետությունների լիգան խստիվ դատապարտել է Իսրայելի իշխանությունների գործողությունները, զբոսանավի կալանումն անվանելով «ծովահենային արարք»: Լիգայի գլխավոր քարտուղար Նաբիլ ալ Արաբին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից եւ միջազգայնությունից պահանջել է վճռականորեն հանդես գալ Իսրայելի դեմ: Նա ավելացրել է, որ Գազայի հատվածի մեկուսացման ռեժիմը անօրինական է:

Համանման հայտարարությամբ հանդես է եկել պաղեստինյան «Համաս» արմատական կազմակերպությունը:

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Արտագաղթի թեման երբեմն ուղղակի շահարկվում է

Արտագաղթի թեման Հայաստանի համար միշտ էլ եղել է կարեւորագույն խնդիրներից մեկը, սակայն ուշագրավ է, որ այս հարցը այնքան չի շոշափվել մինչեւ 2001 թվականը, որքան վերջին շրջանում: Բնականաբար, ներքին որոշ ուժերի ոգեւորված շահարկումներն այս թեմայով իսկույն սկսեցին օգտագործել ադրբեջանցիները: Այն էլ՝ մեծ ոգեւորությամբ: Թեպետ, եթե անկեղծ լինենք, ոչ պակաս ոգեւորությամբ թե ներքին շահարկումները, թե առավել եւս ադրբեջանական բարբաջանքները «ռասկրուտկա» են անում մեր առանձին լրատվամիջոցներ: Իսկ որ նշյալ արծարծումները հաճախ շահարկումներ են, ցույց են տալիս բազմաթիվ փաստեր:

Նախ, 2001 թվականը պատահական չնշեցինք: Հուլիսի 20-ին ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն պետական ծառայության ղեկավար **Գագիկ Եգանյանը** նշեց, որ մինչեւ 2001-ը արտագաղթածների թիվը տատանվում է 1-1,1 մլնի սահմաններում: Այնինչ, հենց այդ տարիներին թեմայի քննարկումներն ավելի փիչ էին, քան այսօր, առավել եւս, որ դրա մասին խոսում են հենց նշյալ տարիների արտագաղթի գլխավոր պատասխանատուներն ու հեղինակները:

Շահարկումների մասին շատ հստակ արտահայտվեց նաեւ ՀՀ նախագահ **Սերժ Սարգսյանը**՝ միգրացիոն հաղթահարությանը նվիրված խորհրդակցության ժամանակ. «Եթե մենք պատշաճ ուշադրություն չենք դարձնում թվերի ու միտումների պարբերական հրապարակային մեկնաբանությանը, ապա կիսապոռաս եզրակացությունների ու մակերեսային վերլուծությունների միջոցով բավականին ակտիվ շահարկումներն ուղղակի անխուսափելի են դառնում»: Ավելին, հանրաքվեության ղեկավարը նշել է, որ շատ ուշադիր հետեւել է այս հարցի շուրջը ծավալված հանրային բանավեճին եւ կարծում է, որ ո՛չ մեր փորձագետները, ո՛չ համապատասխան կառույցների ղեկավարները չկարողացան կամ չփորձեցին իրենց հրապարակային խոսքով ազդեցիկ կերպով բացատրել ու հորդորել մեր քաղաքական գործիչներին՝ որեւէ ցուցանիշ թմբկահարելուց առաջ ավելի համակողմանի ներկայացնել պատկերն ու հիմնվել օբյեկտիվ միտումների վրա»:

Հիմա փորձենք փաստացի թվերի ու միջազգայնորեն ընդունված հաշվարկների միջոցով հասկանալ՝ իրականում որքանով է արդարացված բարձրացված աղմուկը: Այն, որ արտագաղթը եւ միգրացիոն գործընթացները Հայաստանում համընդհանուր հետաքրքրության են եւ մտահոգության առարկա են, նշեց նաեւ հանրաքվեության նախագահը: Սակայն, այսպես կոչված, օդից փախցրած որեւէ թվի հիման վրա նման աղմուկ բարձրացնելը որեւէ տրամաբանության չի ենթարկվում:

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով՝ ՀՀ մշտական բնակչության թվաքանակը կազմել է 3213011 մարդ, իսկ առկա բնակչության քանակի ցուցանիշը՝ 3002594 մարդ:

Համաձայն պաշտոնական վիճակագրական տվյալների, 2002-2010թթ. հանրապետությունում պաշտոնապես վարչական գրանցումների եղանակով արձանագրվել է 351100 կենդանի ծնունդ եւ 240500 մահվան դեպք, այսինքն՝բնակչության բնական հավելաճի ցուցանիշը կազմել է 110600 մարդ: Նույն ժամանակահատվածում պաշտոնապես վարչական հաշվառման ենթարկվող բնակչության տեղաշարժերի վերաբերյալ տվյալներով՝ հաշվառումից հանվածների թվաքանակը (69,2 հազ.) 57500 մարդով ավելի է եղել, քան հաշվառման կանգնածների թվաքանակը, ինչի հաշվին բնակչության ընդհանուր հավելաճի ցուցանիշը կազմել է 53100 մարդ (110600-ից հանած 57500): Ընդ որում, բնակչության թվաքանակի ցուցանիշի հաշվարկի ժամանակ կիրառված վիճակագրական ճշգրտման արդյունքում 2002-2010թթ. ընթացքում բնակչության թիվն աճել է 49700 մարդով, այլ ոչ թե նվազել, ինչպես փորձում են ներկայացնել:

Հաշվի առնելով, որ պաշտոնապես վարչական հաշվառմամբ չի ապահովվում բնակչության տեղաշարժերի ամբողջական ընդգրկումը, այդ իսկ պատճառով այլընտրանքային եղանակով բնակչության տեղաշարժերի վերաբերյալ տվյալներ են ստացվում նաեւ ըստ սահմանահատումների: Վերը նշված ժամանակահատվածում ՀՀ սահմանային կետերով իրականացված արտաքին ուղեւորաշրջանառության կազմում՝ հանրապետությունից դուրս ուղեւորությունների ցուցանիշը 57,8 հազարով գերազանցել է դեպի հանրապետություն ուղեւորությունների թվին: Այսինքն, երկու աղբյուրների տվյալները վիճակագրորեն շատ մոտ են:

Ինչ վերաբերում է 2011-ի առաջին կիսամյակի տվյալներին, ապա, ինչպես նշեց հանրապետության նախագահը, Հայաստանից մեկնողների թվաքանակն առաջին 6 ամիսներին 67 հազար մարդով գերազանցել է ժամանողներինը: «Սա որեւէ նոր միտում չի ենթադրում եւ ամբողջությամբ համապատասխանում է անցած տարիների միտումներին, սակայն այն գերազանցում է նախորդ տարիների ցուցանիշը: Դա հիմնականում պետք է բացատրել այն հանգամանքով, որ համաշխարհային տնտեսությունը հաղթահարել է ճգնաժամի հետեւանքները, եւ, մասնավորապես, Ռուսաստանում տնտեսության վերականգնմանը զուգընթաց, Հայաստանից վերսկսվել է եւ տեղի ունի աշխատանքային միգրացիայի տեմպերի աշխուժացում», ասաց Սերժ Սարգսյանը՝ միեւնույն ժամանակ հավելելով, որ «Հայաստանից դուրս, օտար ափերում աջողություններ փնտրողների թվաքանակը պետք է համարել մեծ, եւ մենք պետք է, իհարկե, լուրջ անհանգստանանք այս խնդիրներով ու բազմապատկենք մեր ջանքերը բարեփոխումների արագացման գործում: Միակ գործոնը, որ կարող է իսպառ բացառել Հայաստանից մեկնողների ու ժամանողների թվաքանակի բացասական տարբերությունը՝ մեր երկրում այնպիսի պայմանների ստեղծումն է, ինչպիսի պայմանների համար մարդիկ հեռանում են երկրից»:

Ինչ վերաբերում է անընդհատ շահարկվող 45000 թվին, ապա դժվար է չհամաձայնել հանրապետության նախագահի հետ, որ եթե որեւէ մեկը նեղություն կրեր դիտարկել այս ցուցանիշի դինամիկան ամսական կամ եռամսյակային կտրվածքներով, ապա կարող էր հետքությամբ նկատել, որ այս տարի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին արդեն հակառակ պատկերը կլինի եւ Հայաստան վերադարձողների ու Հայաստանից մեկնածների տարբերությունը կգերազանցի 40 հազարը, կամ, այսպես ասած, Հայաստանը լքածներից 40 հազարը կվերադառնա:

Ընդ որում, պետք է հաշվի առնել թե՛ սեզոնայնությունը, թե՛ նաեւ այն հանգամանքը, որ վերջին տարիներին Հայաստան մուտք գործած եւ Հայաստանից դուրս եկած մարդկանց թվաքանակը փոքր-ինչ ավելի է եղել Հայաստանի մշտական բնակչության համեմատ, ինչը նախ եւ առաջ խոսում է երկրի եւ հասարակության ընդհանուր զարգացումների մասին:

Հ.Գ.-Ինչ վերաբերում է ադրբեջանցիների ոգեւորությանն ու շահարկումներին այս թեմայով, ապա դրանց ուղղակի պետք չէ լուրջ վերաբերվել, նրանց այս նոր թեզն իրոք ծիծաղ առաջացնող է, ինչպես եւ նկատեց ՀՀ նախագահը:

Մ. ՍԵՄԵՐՋՅԱՆ

Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի հինգ տարբերակ

Ինչպես տեղեկացանք տրանսպորտի եւ կապի նախարարության մամուլի ծառայությունից, նախարար Մանուկ Վարդանյանի մոտ երեկ տեղի է ունեցել խորհրդակցություն, որին մասնակցել են «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության ղեկավար անձնակազմը՝ գլխավոր տնօրեն Շեւֆես Շայդուլլինի գլխավորությամբ:

Խորհրդակցության ընթացքում քննարկվել է Վանաձոր-Ֆիոլետովո երկաթգծի նախագծային աշխատանքների կատարման ընթացքը, որոշվել առաջիկայում մասնագետների հետ քննարկել երկաթգծի ներկայացված հինգ տարբերակներն ու դրանց ֆինանսական գնահատականները՝ ներկայացնելով առաջարկներ հետագա աշխատանքների վերաբերյալ:

Հանդիպման ժամանակ քննարկվել է «Հարավկովկասյան երկաթուղիներ» ընկերության ներդրումային ծրագրի առաջին կիսամյակի նախնական կատարողականը: Ընկերության գլխավոր տնօրեն Շեւֆես Շայդուլլինը պարզաբանումներ է ներկայացրել ներդրումային ծրագրի թերացման վերաբերյալ եւ հավաստիացրել, որ այն ամբողջությամբ կկատարվի հաջորդ կիսամյակում:

Ա. Մ.

ԳՅՈՒՄՐԻ

Խոշընդոտներ երկրաշարժից անօթեւան...

1-ին էջից

Բնակարանների բաշխման գործընթացին բոլոր անօթեւան ընտանիքների մասնակցությունն ապահովելու, նրանց խարխուլ տնակներից օր առաջ ձերբազատվելու հնարավորություն ընձեռելու եւ Գյումրիում անօթեւանության խնդրի թեթեւացման նպատակով «Շիրակ կենտրոնը» դիմել է ՀՀ վարչապետին եւ քաղաքաշինության նախարարին, առաջարկելով առկա իրողություններից բխող նոր փոփոխություններ կատարել բնակբաշխման կարգը սահմանող ՀՀ կառավարության որոշումներում: Դիմումում առաջարկվում է բնակբաշխման գործընթացին մասնակցելու հնարավորություն ընձեռել բնակարան ստանալու համար պահանջվող փաստաթղթերի փաթեթները մասնակի համալրած այն ընտանիքներին, որոնց մեկ կամ մի քանի անդամներ գրավոր եւ պատշաճ իրազեկվելուց հետո էլ հրաժարվում են տրամադրել իրենց անձնական փաստաթղթերն ու մասնակցել գործընթացին, իսկ իրենց փաստաթղթերը տրամադրելուց հրաժարվող քաղաքացիներին այլեւս չճանաչել բնակարան ստանալու շահառու: Առաջարկվում է երկրորդ փոփոխությամբ այդ գործընթացին մասնակցելու հնարավորություն տալ անօթեւանների հերթացուցակում հաշվառման եւ վերահաշվառման ժամանակ Հայաստանից ժամանակավորապես բացակայելու եւ տարաբնույթ այլ պատճառներով հաշվառումից դուրս մնացած այն ընտանիքներին, որոնք երկրաշարժին բնակարան են կորցրել, սակայն մինչեւ օրս չեն փոխհատուցվել:

Անհրաժեշտ է համարվել նաեւ ՀՀ կառավարության կողմից մինչեւ 2013 թվականը աղետի գոտում իրականացվող բնակարանաշինության ծրագրից օգտվելու հնարավորություն ընձեռել երկրաշարժի հետեւանքով սեփական տուն կորցրած եւ նախկինում բնակարանով ոչ ամբողջովին ապահովված ընտանիքներին:

Գ. Մ.

Ավել Ֆիշեր. ԵԽԽՎ-ի ...

1-ին էջից

Կոալիցիոն խմբակցությունների ներկայացուցիչներն էլ անմիջապես շեշտել են հայաստանյան իրականության մեջ քաղաքական նոր մշակույթի, հակասություններից համագործակցության անցնելու հնարավորության մասին՝ չնայած դժվարություններին (Ն. Զոհրաբյան, Դ. Հարությունյան):

ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության ղեկավար Դ. Հարությունյանը մանրամասն անդրադարձ է արել ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընթացքին՝ նշելով, որ Վենետիկի հանձնաժողովից ստացված առաջարկների 90 տոկոսը արտացոլվել է նախագծում: Նա խոսել է նաեւ դատաիրավական բարեփոխումների մասին, ապա անհամաձայնություն է հայտնել 1416 բանաձեւով ԼՂ հարցով ենթահանձնաժողովի աշխատանքի վերսկսման վերաբերյալ, ինչը հայկական կողմը անարդյունավետ եւ վտանգավոր է համարում:

Ն. Զոհրաբյանն էլ համազեկուցողի ուշադրությունը հրավիրել է Ադրբեջանում հայատյաց քարոզչության վրա՝ ադրբեջանական դասագրքերի վերաբերյալ իր հետազոտությունը ներկայացնել խոստանալով եւ նշելով, թե ԵԽԽՎ-ում երկու հասարակությունների միջեւ վստահության մթնոլորտ ձեւավորելու հարցից պետք է սկսեին եւ ոչ թե ԼՂ վերաբերյալ ենթահանձնաժողովից:

Հետաքրքրական է, որ Ա. Ֆիշերը հասկանալի է համարել հայկական պատվիրակության դիրքորոշումը ԼՂ ենթահանձնաժողովի հարցում, քանի որ, իր խոսքով, մասնակցելով ենթահանձնաժողովի նիստին, տպավորություն է ստացել, որ այնտեղ գաղափար չունեն, թե ի՞նչ հարցով են զբաղվելու:

Այնուհետեւ Ռ. Ֆիշերը հանդիպել է նախ ՀՅԴ, ապա «Ժառանգություն» խմբակցությունների ներկայացուցիչների հետ:

ՀՅԴ-ից Արսյուշա Շահբազյանն ու Հայր Կարապետյանը նախ իշխանություն-ՀԱԿ երկխոսությունը ողջունելի են համարել՝ որպես ներքաղաքական լարվածությունը թուլացնելու միջոց, բայց եւ նշել են, թե պարզ չէ երկխոսության թեման, իսկ ՀԱԿ-ի առաջարկած արտահերթ ընտրություններն իրենց հետ անկայունություն կբերեն: Հայր Կարապետյանը, որպես գլխադասային համապատասխան հանձնաժողովի նախագահ ոստիկանությունում սկսված բարեփոխումները նույնպես ներկայացրել է: Ա. Ֆիշերը խոսել է 2012 թվականի խորհրդարանական ընտրությունների ընթացքում ԶԼՄ-ների ազատության մասին:

«Ժառանգության» ներկայացուցիչները ներկայացրել են իրենց տեսակետը՝ ԵԽԽՎ բանաձեւերով Հայաստանի պարտավորությունների անբավարար կատարման մասին, մտահոգություն հայտնել վերջին կոալիցիոն հուշագրի բովանդակության եւ հետաքրքրած նպատակների, միակողմանի ընտրական օրենսգրքի եւ ԿԸՀ կազմավորման արատավոր գործընթացի, ԶԼՄ-ների շուրջն ստեղծված իրավիճակի առումով, նշել մարտի 1-ի դեպքերի լիարժեք բացահայտման անհրաժեշտությունը:

Օրվա երկրորդ կեսին, ՀԱԿ-ի հաղորդագրության համաձայն, հանդիպել են նաեւ Ա. Ֆիշերն ու Լեւոն Տեր-Պետրոսյանը: Վերջինս շնորհակալություն է հայտնել համազեկուցողներին՝ մարտի 1-ի ոճրագործության բացահայտմանն ուղղված ջանքերի համար, ապա ներկայացրել է Հայաստանի ներքաղաքական գործընթացները, հատկապես իշխանություն-ընդդիմություն երկխոսության ընթացքը: Նա խոսել է արտահերթ նախագահական եւ խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ ՀԱԿ-ի պահանջի, ազատ ընտրություններով Հայաստանում լեգիտիմ իշխանություն ձեւավորելու եւ ընտրական մեխանիզմները բարելավելու, ինչպես նաեւ 2000 հազար միջազգային դիտորդ ուղարկելու անհրաժեշտության մասին, չի մոռացել նաեւ հեռուստաթերթի տոտալ վերահսկողությունը բացառելը:

Իսկ ավելի վաղ նախագահ Սարգսյանն էր երեկ ընդունել Ա. Ֆիշերին՝ բարձր գնահատելով Եվրոպայի խորհրդի եւ ԵԽԽՎ-ի հետ ձեւավորված համագործակցությունը եւ շեշտելով, որ Եվրոխորհրդի իրականացրած աշխատանքը շատ կարեւոր է Հայաստանի ժողովրդավարացման ճանապարհին: Հանդիպման ընթացքում անդրադարձ է եղել Հայաստանում իրականացվող բարեփոխումներին եւ ներքաղաքական գործընթացներին:

Ա. Ֆիշերի փաստահավաք առաքելությունը կավարտվի հինգշաբթի օրը:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՅ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հաշվառված են 20 անչափահաս մուրացկաններ

ՀՕՖ հաճախող երեխաների 50 տոկոսը ընտանեկան բռնության զոհ է

Եթե որեւէ մասնագիտություն սանալու համար անհրաժեշտ է հասուկ ուսուցում, ապա «ծնողի» մասնագիտության դիմելոմ որեւէ հասատություն չի կարող տրամադրել: Որեւէ մեկը ծնող չի պատրաստում, նրանք հաճախ կրկնօրինակում են իրենց ընտանիքներում ունեցած սոցիալական փորձը: Իսկ այդ փորձը միշտ չէ, որ դրական է: Տեսակետը Հայ օգնության ֆոնդի երեխաների կենտրոնի գործադիր տնօրեն **Միրա Անտոնյանինն** է: Նա հավելում է, որ երեխաների խնդիրներն ու բռնությունը կապակցված են ծնողների հետ: Հաճախ են պատահում դեպքեր, երբ ծնողները հարբեցող են, թմրանյութ են օգտագործում, սոցիալական ծանր վիճակի եւ անելանելիության պարագայում ծեծում երեխաներին: Կենտրոնը, որ նախկինում ոստիկանության ընդունիչ-բաշխիչ կայանն էր, այսօր կարող է ընդունել տարածաշրջանի բոլոր հայ անչափահասներին: Այստեղ հայտնված երեխաների խնդիրները տարբեր են՝ բռնություններ, աղքատություն, կոնֆլիկտներ դպրոցում կամ ընտանիքում:

ՀՕՖ հաճախող երեխաների կեսից ավելին ընտանեկան բռնության զոհեր են: Տարեցտարի նրանց թիվն ավելի է շատանում: Եթե 2006-ին ընտանեկան բռնության զոհ էին կենտրոնի երեխաների 28%-ը, ապա 2010-ին թիվը հասել է 54%-ի: Սա այն պարագայում, երբ միջին հաշվով տարեկան կենտրոնն ընդունում է 150 երեխայի: «Երեխա ենք ընդունել, ում մայրը կարտոֆիլ մաքրող դանակով խփել է երեխային, երբ վերջինս աղմկել է: Պետք է լուրջ աշխատանք տարվի ծնողի հետ՝ նրան հասկացնելու, որ բռնությունն ու ուժի գործադրումը որեւէ դրական ելքի չեն բերի»:

Հայ ընտանիքներում առավել տարածված է հոգեբանական բռնությունը: Համաձայն հարցումների՝ յուրաքանչյուր երրորդ ծնողը չի խորհում տգեղ բառ օգտագործելուց երեխայի հասցեին:

«Շատ ծնողներ հպարտանում են իրենց խստությամբ եւ հայտարարում, թե լավ ծնող են, քանի որ երեխան իրենց մոտ ձայն հանելու իրավունք չունի»: Նրանք չեն գիտակցում, որ այդ խոսքերը լուրջ ազդեցություն են ունենում: Երեխան չի կարողանում իրեն զսպել որեւէ միջավայրում, դառնում է լռակյաց եւ անտարբեր:

ՀՕՖ-ի գործադիր տնօրենը հավելում է, որ բռնության ենթարկված անչափահասները հետագայում դա իրենց կյանքում վերարտադրում են: «Կան վերքեր, որոնք ամբողջ կյանքի ընթացքում չեն բուժվում», ասում է նա: Թեպետ բացահայտված դեպքերը քիչ են, սակայն Միրա Անտոնյանը չի բացառում, որ մանկատներում առկա են ոչ միայն թրաֆիքինգի, այլեւ սեռական բռնության բազմաթիվ դեպքեր: Մանկատներում հայտնված երեխաների մեծ մասն արդեն բռնության զոհ է: «Նրանց ինքնագնահատականը ցածր է, խաբելն ու գաթակղելը՝ դյուրին: Մանկատան երեխաները, դառնալով շրջանավարտներ եւ դուրս գալով մանկատների պատերից, չեն ունենում սոցիալական հենարան»:

Ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության 3-րդ վարչության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ **Նելլի Դուրյանն** էլ հիշեցնում է, որ Նուբարաշենի հատուկ դպրոցում կատարված իրադարձություններից հետո, երբ հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչը սեռական ոտնձգություն էր կիրառել դպրոցի անչափահաս աշակերտուհիների նկատմամբ, ուշադրությունն առավել զգոնացել է այդ հարցի ուղղությամբ:

«Մեր զգոնությունը կրկնապատկվել է, ամենօրյա աշխատանք ենք իրականացնում՝ նման դեպքերը բացառելու համար», ասում է Դուրյանը՝ հավելելով, որ այդ հարցում իրենց պետք է օգնեն նաեւ զոհերն ու նրանց ծնողները: «Մինչդեռ ծնողներն ամաչում են այդ մասին բարձրաձայնել, երեխաներին էլ սիրում են լռել»:

Համաձայն վիճակագրության՝ նախորդ տարվա համեմատությամբ ֆիզիկական եւ սեռական բռնության դեպքերը չեն ավելացել, սակայն դրանք չեն էլ նվազել: Այժմ լուրջ աշխատանքներ են ընթանում ընտանեկան բռնության մասին օրենքի նախագծի մշակման շուրջը:

Միրա Անտոնյանի խոսքերով՝ մարզերի մանկապարտեզներում եւ դպրոցներում բռնության դեպքերը բազմաթիվ են: «Տերթոդիկյան գործելաոճը շարունակվում է», ասում է նա՝ հավելելով, որ հաճախ երեխաներին պտակում են, վիրավորում, անկյուն կանգնեցնում: Մինչդեռ դրա փոխարեն պետք է երեխային բացատրեն, հասկացնեն: Հելսինկյան ասոցիացիայի հարցմանը, որին մասնակցել է 2500 հոգի, միայն 30%-ն է ասել, որ դասաժամերին պտակը սխալ քայլ է:

Նելլի Դուրյանը հիշեցնում է, որ Նուբարաշենի թիվ 18 հասատության տնօրենը դատապարտվել է 10 տարվա ազատազրկման, որովհետեւ

սիրում էր երեխաներին զբաղվել մուրացկանությամբ:

Անդրադառնալով մուրացկան եւ թափառաշրջիկ երեխաների խնդրին, ոստիկանության գնդապետը նշեց, որ նրանց թիվը շատանում է ամռան ամիսներին: Պատճառն ամառային արձակուրդներն են, ծնողների տեսադաշտից դուրս մնալը: Երեխաների մի մասն էլ կարիքները հոգալու համար փողոցում գումար է մուրում: Հուլիսի 15-16-ին ոստիկանությունը խոշորամասշտաբ ստուգայց է կատարել՝ հայտնաբերելով մուրացկանությամբ զբաղվող տղայի, որն արդեն հաշվառված է ոստիկանության համապատասխան տարածքային բաժնում:

«Հայտնաբերվել են երկու ծնողներ, որոնց 5-6 տարեկան երեխաները ծաղկավաճառությամբ էին զբաղվում: Ծնողների հետ պրոֆիլակտիկ աշխատանք է կատարվել»:

Դուրյանը հավելում է, որ անչափահաս մուրացկանները մայրաքաղաքում ավելի շատ են, քան մարզերում: Այժմ ոստիկանությունում հաշվառված են 20 անչափահաս մուրացկաններ: Ոստիկանության գնդապետի խոսքերով՝ երեխային միանգամից հաշվառման չեն վերցնում: Երեխան կարող է սխալվել, կամ գուցե ծնողը տեղյակ չէ դրանից: «Զրուցում ենք ծնողի հետ, որ նա երեխային պահի ուշադրության կենտրոնում եւ բացառի նման դեպքերի կրկնությունը: Եթե պատմությունը կրկնվում է, երեխային վերցնում ենք հաշվառման»:

ՀԱՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նարեկ Սարգսյանի երազած թմբուկն արժե 10 միլիոն դոլար

Թեպետ Ճարտարապետների միության բոլոր անդամները, անվանի ճարտարապետներն ու Ալեքսանդր Թամանյանի թոռը վստահեցնում են, որ կառավարության շենքի բակում նախատեսված թմբուկը կառուցվում է Ալ. Թամանյանի նախագծով, Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը, որը նախագծի հեղինակն է, հակառակն է պնդում: Երեկ քաղաքապետարանում տեղի ունեցած հանդիպման ժամանակ Նարեկ Սարգսյանը նշել է, որ թմբուկի կառուցման հարցը նոր չէ:

«2008-ից բազմիցս անդրադարձ է եղել խնդրին: Ակտիվ քննարկումները վերսկսվել են, երբ կառավարությունը մի շարք նախարարությունների համար տարածք հատկացնելու խնդիր է դրել: «Կառուցել, թե չկառուցել թմբուկը» հարցն իր պատասխանն է ստացել վերջերս Երեւան քաղաքի քաղաքաշինական խորհրդի նիստում: Ձայների ճնշող մեծամասնությամբ ընդունվել է, որ թմբուկի կառուցումը անհրաժեշտություն է», մայրաքաղաքի գլխավոր ճարտարապետի խոսքն է փոխանցում Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունը:

Նարեկ Սարգսյանի մեկնաբանությամբ՝ առանց ճարտարապետական այդ բաղադրիչի Հանրապետության հրապարակի տեսքը ամբողջական չէ: Անդրադառնալով ճարտարապետների ահազանգին, որ թմբուկի թամանյանական նախագիծը Սարգսյանը խեղաթյուրում է, Երեւանի գլխավոր ճարտարապետը հավաստիացրել է՝ նախագծից էական որեւէ փոփոխություն տեղի չի ունեցել:

«Բոլոր համամասնությունները ստուգված են, չափերը, արխիվային նյութերը երկար տարիներ ուսումնասիրված, ծավալների եւ արտաքին լուծումների մասով ամբողջական ճշգրիտ վերծանված են Թամանյանի նախագծի չափերը»:

Ճարտարապետը չի բացառել, որ շինարարության ընթացքում որեւէ նախագիծ կարող է որոշակի փոփոխություններ կրել, բայց ոչ գաղափարախոսության, ընդհանուր կոնցեպցիայի կամ ոճական լուծումների առումով: Վերջինիս խոսքով, Օպերայի եւ բալետի թատրոնի շենքի նախագիծը 20% շեղում ունի Թամանյանի բուն նախագծից. «Փոփոխությունները վերաբերում են վերեւից լուսավորության ապահովմանը: Այն տարիներին նման բան չէին անում տեխնիկական հնարավորությունների առումով»:

Թմբուկի ներքեւի մասում նախատեսված բաց տարածքներն էլ, ըստ Սարգսյանի, կթողնվեն հակահրդեհային անվտանգության ապահովման համար:

Երեւանի գլխավոր ճարտարապետի վստահեցմամբ՝ նախագիծը պրոֆեսիոնալ է, բավականին բարձր դիրքի շնորհիվ մի շարք ուղղություններով լայն տեսադաշտ է ապահովվում:

13 հազար քմ, 50 մետր բարձրությամբ 13-հարկանի շինության կառուցման համար կպահանջվի 10 մլն դոլար: Երեւանի գլխավոր ճարտարապետի փոխանցմամբ՝ միջոցները կտրամադրվեն ոչ թե պետբյուջեից, այլ ներդողներից՝ գույքային փոխանակմամբ:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտել մեկուկես տարում:

Հ. Հ.

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական ակտիվության աճը հունիսին՝ 2,3 տոկոս

Արդյունաբերությունը շարունակում է մնալ աճի առաջատարը

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2011-ի հունիս ամսվա սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա հունիսի համեմատ գրանցել է 2,3 տոկոս աճ: Հիշեցնենք, որ այս տարվանից ազգային վիճակագրական ծառայությունն անցնում է մակրոտնտեսական ցուցանիշների հավաքման, հրապարակման եւ ամփոփման նոր մեթոդի: Մասնավորապես, դադարեցվում է համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ամսական հաշվարկումը, իսկ որպես տնտեսության վիճակը գնահատող ամսական ցուցանիշ ներկայացվելու է տնտեսական ակտիվության ցուցանիշը:

Տնտեսության ճյուղերից ամենամեծ աճը հունիսին ունեցել է արդյունաբերությունը: Նախորդ տարվա հունիսի համեմատ արդյունաբերությունն աճել է 24,7 տոկոսով: Արդյունաբերությունն աճել է նաեւ նախորդ ամսվա՝ մայիսի նկատմամբ՝ 5,8 տոկոսով: Գյուղատնտեսության արտադրանքի ծավալը նախորդ տարվա հունիսի համեմատ աճել է ընդամենը 10,1 տոկոսով, իսկ այս տարվա մայիսի նկատմամբ՝ 40,8 տոկոսով: Շինարարությունը հունիսին արձանագրել է 31,3 տոկոս անկում նախորդ տարվա հունիսի համեմատ, իսկ այս տարվա մայիսի համեմատ՝ 1,7 տոկոս աճ:

Մանրածախ առեւտրում արձանագրվել է 6 տոկոս աճ անցյալ տարվա հունիսի համեմատ, իսկ այս տարվա մայիսի նկատմամբ՝ 6,5 տոկոս աճ: Ծառայությունների ոլորտում անցյալ տարվա հունիսի նկատմամբ աճը կազմել է 4,1 տոկոս, իսկ այս տարվա մայիսի նկատմամբ՝ 7 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրությունը աճել է 16,4 տոկոսով, իսկ մայիսի նկատմամբ՝ 2,3 տոկոս նվազել:

Արտահանման առեւտրաշրջանառությունը 2011-ի հունիսին 2010-ի հունիսի նկատմամբ ավելացել է 10,4 տոկոսով եւ կազմել 441 մլն դոլար: Արտահանումը կազմել է 115,6 մլն դոլար, արձանագրելով 32,5 տոկոս աճ, իսկ հունիսին մայիսի նկատմամբ՝ 1,1 տոկոս աճ: Ներմուծումը կազմել է 325,4 մլն դոլար, նախորդ տարվա հունիսի համեմատ աճելով 4,3 տոկոսով, իսկ այս տարվա մայիսի համեմատ՝ նվազելով 9,5 տոկոսով: Արտահանման առեւտրի բացասական հաշվեկշիռը հունիսի արդյունքներով կազմել է 210 մլն դոլար, այսինքն՝ փոքր-ինչ բարելավվել է մայիսին արձանագրված 246 մլն դոլարի համեմատ:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունիսին կազմել է գրեթե 114 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 142 հազար դրամ, պետականում՝ 89 հազար դրամ:

Այսպիսով, մակրոտնտեսական ցուցանիշների տվյալներից ելնելով, մեկ անգամ եւս հարկ է ընդգծել հիմնական դրական պահը՝ արդյունաբերական արտադրանքի աճի բարձր՝ 24,7 տոկոս, ցուցանիշը: Գյուղատնտեսության արտադրանքի ցուցանիշը նույնպես սկսել է աճել, որը հիմնականում պայմանավորված է սեզոնային գործոնով եւ այս տարվա ֆիչ թե շատ բարենպաստ բնակլիմայական պայմաններով: Շինարարությունը, սակայն, նախորդ տարվա մայիսի համեմատ, իսկայական՝ գրեթե մեկ երրորդով անկում է արձանագրել, իսկ այս տարվա մայիսի համեմատ՝ աննշան աճ: Մինչդեռ հենց ամռան ամիսներն են համարվում այս ճյուղի համար ամենաբարենպաստը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՈՍՅԱՆ

Անհավատի «տօրինած» համայնքն ու եկեղեցին

Նիսի հայ համայնքում խնդիրներն ավելանում են, իսկ որպես պատճառ նշվում է աշխարհի պես հին մի իրողություն՝ դրամը, եւ քաղաքական խաղերը

Այն, ինչ տեղի է ունենում եվրոպական որոշ հայկական համայնքներում եկեղեցու առնչությամբ, դարձել է մեծագույն մտահոգության առարկա: «Ազգը» ներկայացնում է հարցազրույց Ֆրանսիայի Սրասբուրգ քաղաքում իր հոգեւոր ծառայությունը իրականացնող Վաչե քահանա Հայրապետյանի հետ, որը նախկինում սպասարկում էր Նիսի աղմկահարույց համայնքը: Արդեն 6 ամսից փիչ ավելի է, ինչ Սրասբուրգում հայերը հայ եկեղեցու պատարագի մասնակցելու հնարավորություն ունեն: Հայկական եկեղեցին արդեն գրանցվել է, պատկանում է Ֆրանսիայի թեմին, հաջողվել է կաթոլիկ եկեղեցիներից մեկի մի հատվածը անվճար տնօրինել արարողությունների համար: Սրասբուրգի հայ երիտասարդներն արդեն ուզում են Սրասբուրգի հայության երիտասարդաց միություն ստեղծել:

- Տեր Վաչէ, Նիսի համայնքում Ձեր գտնվելու ընթացքում Ձեր հասցեին հնչել են տարբեր մեղադրանքներ՝ հոգեւորականին անհարիր պահվածքից ու մաֆիայի հետ հարաբերություններ ունենալուց մինչեւ զենքի վաճառք, անգամ լուրեր, թե Ձեզ ներկայացվել են իրավապահների կողմից մեղադրանքներ: Ի՞նչ կասեք այդ մեղադրանքների առնչությամբ:

- Ես չգիտեմ՝ որտեղից են նման լուրեր տարածվում, բայց Նիսի համայնքի հետ ես շփվել եմ, շատ ընտանիքներ բերել եմ դեպի եկեղեցի: Իմ շփումները ժողովրդի հետ եղել են եկեղեցու սահմաններից ներս: Եկեղեցի շատ մարդիկ են գալիս, արարողություններ են լինում, նկարվում են հոգեւորականի հետ: Ես չգիտեմ, թե ինչ կյանքով են նրանք ապրում դրսում, մենք նրանց դիտում ենք որպես եկեղեցի եկող մարդկանց, ես լուր անգամ չունեմ, թե ում են որակում մաֆիոզ եւ այլն:

- Առավելապես այդ լուրերի տարածման աղբյուրը Նիսի եկեղեցական խորհուրդն է, որն էլ միայն մեկն է: Հոգեւորականը չի որոշում, բայց պետք է մասնակցի, ինչին իրենք դեմ էին: Ընդ որում, համայնքում էլ ներազգային ռասիզմ է ձեւավորվել, որոշ պոլսահայեր են համայնքը վերցրել իրենց ձեռքը արդեն 25 տարի: Պոլսահայերի համար բոլոր լիբանանահայերը դաշնակ են, չպետք է մտնեն համայնք, հայասանցիներն էլ բոլորը ավազակներ են, ոչ տեղ ունեն, ոչ ձայն համայնքում, թեեւ բավականին շատ են, այնքան, որ, օրինակ, եթե չլինեին հայասանցի հայերը, ֆրանսիական պետությունը աշակերտների սակավության պատճառով կփակեր Պարսամյան դպրոցը. 11 աշակերտ էր մնացել, իսկ երկու տարի առաջ արդեն հասել էր մոտ 80-ի:

- Համայնքի՝ պոլսահայ, լիբանանահայ, հայասանցի ի՞նչ թվաքանակի մասին է խոսքը, կա՞ն նման տվյալներ:

- Դա էլ մեկ այլ հարց. առաջին օրերին ինձ հասցե անգամ չէին տալիս համայնքի քարտուղարությունում ժողովրդի հետ կապի մեջ լինելու համար: Ասում էի, գոնե թվաքանակն ասեք, ասացին՝ 5-6 հազար: Ես չեմ կարող ասել, բայց առնվազն 150-200 ընտանիք հայասանցի կա արդեն, ու այդ թիվը ավելանում էր: Ինչեւէ, 2006-ին կանոնադրություն ուղարկվեց Սբ Էջմիածնից, պետք է ծխական ժողով արվեր ընդունելու այդ կանոնադրությունը, որպեսզի հետո ներկայացվեր գրանցման: Մինչ ժողովն իրենք գաղտնի ժողովներ էին արել առանց իմ մասնակցության: Իսկ հենց ծխական ժողովն ուղղակի ահավոր էր, կեղծ մարդիկ էին բերել, անդամ չհանդիսացող ֆրանսիացի հրեաներ եկել էին ընտրության, կաթոլիկներ, որ իրավունք չունեին լինելու այդտեղ, ծխի անդամների ցուցակը ես այդպես էլ չիմացա: Այնպիսի վիճակ էր, որ անիմաստ որակեցի ու դուրս եկա: Ժողովի սկզբից էլ բոլորին հրավիրելու համար ինձ զգուշացնում էին, թե հայասանցիների հետեւից մի ընկիր, իրենք դեռ փոքր են, ձայն չունեն: Ծխական ժողովը, իրենց խոսքով, արեցին, ինչպես արել էին 25 տարի, քանի որ մինչեւ ժողովը վերցրել ու կեղծել էին Վեհափառի ուղարկած կանոնադրությունը, Վեհափառի ուղարկածը խմբագրեցին ու դրեցին Ա եւ Բ կանոնադրություններ՝ խախտելով ամեն ինչ, քանի որ միայն պետք է քվեարկվեր, թե ընդունում են Վեհափառի կանոնադրությունը, թե՝ ոչ: Իսկ երբ մինչեւ ժողովը սկսելը փորձեցինք աղոթք անել, թույլ չտվեցին, սկսեցին նաեւ սուլել: Մենք սիրված զոռով «Հայր մերը» ասացինք: Արգելեցին, որ հոգեւորականները խոսք ասեն: Նույն կերպ արգելում էին նաեւ դպրոց մտնել, չնայած համայնքին դպրոցը նվիրել է եկեղեցին: Ուղիղ մեկ տարի պայքարել եմ, որ կարողանամ դպրոց մտնել: Դպրոցի հանդեսին հոգեւորականը խոսք ասել չէր կարող, աղոթք ասել չէր կարելի:

- Իսկ համայնքը չէ՞ր ընդվզում:

- Շատերն էին ընդվզում, բայց մտածողության տարբերություն կար: Կային ուրիշ պոլսահայեր, որ պարագլուխների արածներին համաձայն չէին: Պարագլուխներից մեկը՝ Սամսոն Օզարարսը, որ շատ ազդեցիկ կապեր ունի Սամբուլի ու Անկարայի հետ, նաեւ Գրիգոր Աժդեհրխանյանը, գորշ կարդինալներ են: Այդ մարդիկ Պոլսի հետ կապեր ունեն, տեղի պոլսահայերը նրանց հետ վախենում են չհամաձայնել: Ինձ մարդիկ ասում էին, որ իրենց ձայնը կան Էջմիածնի կանոնադրությանը, եթե փակ քվեարկություն լինի, այլապես՝ ոչ: Ինձ հասած տեղեկություններով՝ պոլսահայերին վախեցնում էին պարագլուխները, թե նրանց Պոլսում բնակվող բարեկամներին կարող են ձերբակալել Թուրքիայում, իսկ այդ դեպքում Նիսի պոլսեցիները սիրված կլինեն դիմելու հենց պարագլուխներին: Կանոնադրության ընտրության ժողովին իրենց մարդիկ գալիս, 7 հոգու տեղ թուղթ էին գցում, հայասանցիներն ասացին, թե տեր հայր, անգամ Հայաստանում նման ընտրություններ չենք տեսել: Եվ իրենց կանոնադրությունը անցավ, կեղծված 43 կետով, սկսեց գործել, չնայած ծուխը Ֆրանսիայի թեմի մեջ էր:

- Լուրեր կային նաեւ, թե ծխական խորհուրդը հայերին չի թողնում դառնալ եկեղեցական միության անդամ:

- Երբ 2003-ին պատարագ էի անում, թեքվում էի խաղաղություն տալու՝ եկեղեցին պարապ էր: Մեկ տարի չարչարվեցի, որպեսզի ընտանիքներ գան, եկան, սկսեցին մտնել միության մեջ, բայց պոլսահայ պարագլուխները սկսեցին տարբերակում դնել: Մարդիկ սկսեցին բողոքել, որ իրենց չեն գրանցում, չեն դարձնում եկեղեցական միության անդամ: Հարցրեցի ծխական խորհրդի ատենապետին, թե ինչու չեն գրանցում, ինձ պատասխանեց, թե պետք է «ֆնություն առնենք նրանցից»: Կուսակցակա՞ն են դառնում, ի՞նչ է դա նշանակում: Մարդը մկրտված է մեր եկեղեցում, ի՞նչ ֆնություն: Իսկ իրական բացատրությունն այն է, որ այդ ընտանիքները իրենց ձեռնտու չէին, քանի որ հետագայում ծխական խորհրդի ընտրության հարց կար, վերընտրվելու հարցեր կային: Կոնֆլիկտը սկսվեց, երբ տեսան, որ ժողովուրդը ակտիվանում է, պահանջում է հաշվետու լինել, ասացին, որ տեր Վաչեն չի աշխատում իրենց հետ: Որպես «տեր Վաչեի ռեստորան» այն տեղը, որտեղ պատարագից հետո հանդիպում էի մարդկանց հետ, սուրճի գավաթի շուրջը զրուցում, փորձում էի մարդկանց կապել եկեղեցուն: Մարդիկ էլ հավաքվում, դաշնամուր էին նվագում, մկրտության արարողություն էին խնդրում անել այդտեղ: Երիտասարդաց միություն ստեղծեցի, ու սրանում էլ վտանգ տեսան, առաջնորդին հայտնեցին, թե ես ժողովրդին հավաքում եւ թմրանյութեր եմ վաճառում: Այդ բոլոր պատմությունները ընկան ժողովրդի ականջը, հենց նրանք էլ ատենապետ Զարեհ Մարտիրոսյանից սկսեցին պահանջել: Պատարագներից մեկի ավարտին իջա՝ տեսնեմ, ծխական խորհրդի այդ մի քանի պարագլուխները ոստիկան են կանչել, թե իրենց չեն թողնում եկեղեցի մտնել, ոստիկաններն էլ մի քանիսին ձերբակալել էին: Ես ոստիկանների հետ խոսեցի ու ներկայացրի, որ Զարեհ Մարտիրոսյանը եկեղեցում կանգնած է: Ձերբակալվածներին բաց թողեցին: Ու նման էլի պատմություններ են եղել: Դրա համար ինձ դարձրեցին մաֆիոզ, կոմունիկե արեցին անստրագիր, թե տեր Վաչեն աղջիկներ է վաճառում արդեն յոթ տարի, Հարավային Ֆրանսիայի զենքի գործը իմ ձեռքն է, թմրանյութերի բարոնը ես եմ, կեղծ դրամները իմ հովանավորությամբ են տպվում եւ այլն: Ոստիկանությունը ոչինչ չէր կարող անել, քանի որ որեւէ փաստ չկար, իբր ես կապ ունեմ ալբանական, ռուսական մաֆիաների հետ, հայերին էլ ես եմ տարել-մտցրել դրա մեջ:

- Ինչպե՞ս ստացվեց, որ հայտնվեցիք Սրասբուրգում:

- Երբ կեղծ կանոնադրություն էին ներկայացրել, օտար մարդկանց էին անդամ դարձրել, այդ ամբողջը դրվեց թեմական խորհրդի առաջ, առաջնորդը ասաց, որ գրում է ծխական խորհուրդը: Իսկ ես պայմանագրով էի այդ ծխական խորհրդի հետ աշխատում, բնականաբար ես եւս հեռացվեցի, որպեսզի նոր ծուխ ստեղծվի: Ինձ այդուհետեւ նշանակեցին Սրասբուրգ: Հիմա հայր Գրիգորն է նշանակված, ժամանակավոր ծխական խորհուրդ կա, որում առաջարկվեց, որ թեկնածուներ առաջարկեն նաեւ իրենք, դրան չարձագանքեցին: Տեղեկացա, որ պատարագներից մեկի ժամանակ մտել են, հայր Գրիգորին ընդհատել, կանգնել դրամի վրա, մինչդեռ մոմի տեղում ոչ որ չպետք է կանգնի: Թոհուբոհ են ստեղծել, որ հայր սուրբը հունից դուրս գա, անգամ նկարահանել են, բայց սադրանքը չի հաջողվել:

- Ո՞րն է, ըստ Ձեզ, նման պահվածքի հիմնական պատճառը:

- Եկեղեցին որեւէ համայնքի կենտրոնական ուժն է, ժողովուրդը հավաքվում է եկեղեցու միջոցով: Ժողովուրդը դպրոցի համար անգամ դրամը թողնում է եկեղեցու միջոցով: Այստեղ նաեւ կտակները թողնվում են եկեղեցուն, իսկ շատ կտակներ Նիսում կորել են մինչեւ օրս: Այդ կտակները եղել են տներ, վիլլաներ, որոնց պատմությունն է այսօր քննվում: Այդ ամբողջը թողնում են եկեղեցուն, դրա համար եկեղեցին այդ մի քանի պոլսահայերի համար դրամի աղբյուր է, նաեւ իշխանության, քանի որ եթե եկեղեցին իրենց ձեռքում է, իրենց ձեռքում է նաեւ դպրոցը, հնարավորություն կա եկեղեցու անունից նստել-ելնելու տարբեր մարդկանց հետ, մտնելու քաղաքաշինական եւ օգտագործելու այդ կապերը: 25 տարի առաջ պոլսահայերի այդ խումբը հայտնվեց Նիսում, հնաբնակ ֆրանսահայերը հեռու քաշվեցին: 1988-ին երկրաշարժ եղավ Հայաստանում, օգնության հիմնադրամներ բացվեցին, փակվեցին, Նիսում դեռ մնում է, քանի որ փակվելու դեպքում պետք է հաշվետվություն ներկայացվի, մինչդեռ շատ դրամներ են հավաքվել երկրաշարժից հետո օգնության համար, Նիսի հիմնադրամը մինչեւ 4 մլն ֆրանկ է ունեցել, որի ատենապետը Սամսոն Օզարարսն է: Համայնքը պետությունից հատկացումներ է ստանում, դա էլ է իրենց ձեռքը, իսկ ինչ է արվում՝ չգիտենք: Հայերը եկեղեցուն դիմել էին փոքր գումարի համար Փարիզ գնալու, իրենց մերժվել էր, բայց տեղական «Նիս մաթան» թերթում էլ հրապարակվել էր նույն այդ ժամանակ, որ Նիսի հայ համայնքը գումար է հատկացրել հրեական սինագոգին, որ վերջինս իր կոմունալ ծախսերը հոգա: Եվ ժողովրդին էլ չեն հարցնում, օգնեն թե՞ ոչ: Եվ այս ամենը այն Օզարարսի դեպքում, որը նախագահում է եկեղեցու ծխական խորհուրդը, եկեղեցու անդամ է, բայց հայտարարում է, որ անհավաս է, պատահաբար է կնքվել: Նա շատ լավ կապեր ունի Թուրքիայում, նա է միջնորդ եղել 1993-ին Փարիզում Լեւոն Տեր-Պետրոսյանի հանդիպմանը «գորշ գայլերի» առաջնորդ Թուրքեշի հետ, կա նաեւ նկար, թե ինչպես է Օզարարսը բացում Թուրքեշի մեքենայի դուռը:

- Հիմա այս խնդիրները հաղթահարվա՞ծ են:

- Ոչ, թեմը դեռ իրենց հետ դատի մեջ է: Գործում է Սբ Էջմիածնի խորհուրդը, թեմն էլ պահանջում է ծխական թեմական բուն կանոնադրությամբ ընտրություն: Իրենց ձեռքն է եկեղեցին, դպրոցը, իսկ այդ ամենն իրենց թողնել չի կարելի:

- Ի՞նչ առնչություն եք տեսնում Շվեյցարիայում տեղի ունեցող իրադարձությունների հետ:

- Նիսի խառնակիչ պարագլուխներն անձնական կապեր ունեն Ժնեւի մի քանի խառնակիչների հետ եւ համագործակցում են: Միշտ կապի մեջ են, պարբերաբար հանդիպումներ են կազմակերպում, համատեղ ստորագրահավաքներ են իրականացնում Մայր Աթոռի դեմ, փորձում են խափանել Եվրոպայում թեմեր ստեղծելու ծրագիրը, ընդ որում, Նիսի պարագայում այդ ամենն ուղղակի հակաեկեղեցական է: Սա մի կլան է, որ ամեն բան անում է մարդկանց աղակողմնորոշելու համար: Այս մարդիկ իրենց ավերիչ գործունեությունը փորձում են իրականացնել նաեւ Բելգիայում եւ Հոլանդիայում՝ իրենց մտերիմ որոշ անձանց միջոցով:

Տեր Վաչէն Ստրասբուրգում պատարագի ժամանակ:

Հարցազրույցը վարեց՝
ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Սրասբուրգ-Երեւան

«Կիպրական պետություն որպես այդպիսին գոյություն չունի»

Հայտարարում է վարչապետ Էրդողանը, իսկ ԵՄ-ը ողջամտորեն շրջանցում է Կիպրոսի թուրքական օկուպացիան

Ինչպես նշել էինք նախորդ համարում, հուլիսի 19-ին թուրքական զորքերի Կիպրոս ներխուժման 37-րդ տարելիցին երկօրյա այցով կղզու թուրքական հատված էր ուղեւորվել Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Նախքան մեկնելը Ստամբուլի օդանավակայանում նա հայտարարել էր, որ կսառեցվեն Եվրամիություն-Թուրքիա հարաբերությունները, եթե 2012-ին Կիպրոսի Հանրապետությունը ստանձնի ԵՄ-ի նախագահությունը, իսկ թուրքական կողմը որեւէ հանդիպում չի ունենա եվրոպական այս կառույցի նախագահող երկրի ներկայացուցիչների հետ, որովհետեւ իրենք չեն ճանաչում Կիպրոսի Հանրապետությունը:

Կիպրոսի մայրաքաղաք Նիկոսիայի օդանավակայանում, որը թուրքական հատվածում է, Էրդողանը նոր ելույթ է ունեցել եւ, թուրքական մամուլի վկայությամբ, մասնավորապես ասել է. «Կիպրական հիմնահարցը թեւակոխել է բոլորովին այլ փուլ: Ոչ որ, բայց ոչ որ չի կարող Հյուսիսային Կիպրոսի թուրքերին սրուկի տեղ դնել: Եվ ոչ որ, ըստ հայեցողության, Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության նկատմամբ չի կարող կիրառել տարբեր ծրագրեր, ներառյալ շրջափակումն ու մեկուսացումը: Այս տարածքը ներկված է մեր նահատակների արյունով, որեւէ մեկին չենք կարող թույլատրել, որ այստեղ գործողություն իրականացնի»:

Այնուհետեւ նա շարունակել է. «Կիպրական պետություն որպես այդպիսին գոյություն չունի: Կան Կիպրոսի հունական վարչակազմ ու Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետությունը: Նրանք (հունական կողմը) պետք է հավասարիմ մնան իրենց խոսքին: Հավասարիմ պետք է մնա նաեւ Եվրամիությունը: Իրավացին մենք ենք, իրավացի լինելու համար էլ՝ հզոր: Հանկարծ չխաբվեք նրանց, ովքեր փորձում են սեղ խրել կիպրացի թուրքերի եւ մեր միջեւ»:

Սեղը վերաբերում է կիպրացի թուրքերի այն ցույցերին, որոնց մասնակիցները հանրահավաքներում Կիպրոսում տեղակայված թուրքական զորքերի ավազակության մեջ մեղադրող, իսկ Թուրքիային՝ «ռադ անող» ցուցապաստառներ էին բարձրացրել, համարելով վերջինին օկուպանտ:

Ինչ վերաբերում է կիպրական պետությանը, ապա նա հռչակվել է դեռեւս 1959-ի օգոստոսի 15-ի լույս 16-ի գիշերը, ստանալով Կիպրոսի Հանրապետություն անունը: Ուղիղ մեկ տարի հետո՝ 1960-ի օգոստոսի 16-ին նորաստեղծ հանրապետությունը սահմանադրություն է ընդունել, մեկ ամսվա տարբերությամբ անդամակցել է ՄԱԿ-ին, իսկ 1961-ին՝ Բրիտանական ընկերակցությանը: 1961-ի դեկտեմբերին Կիպրոսի Հանրապետությանն իրենց շարքերում են ընդունել Միջազգային արժութային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը, 2005-ից այս հանրապետությունը ԵՄ-ի անդամ է, 2012-ին 6 ամսով պետք է ստանձնի եվրոպական այս կառույցի նախագահությունը:

Էրդողանի տրամաբանությունը պարզ է եւ հասկ: Ըստ դրա՝ Կիպրոսի Հանրապետությունը չպետք է դառնա ԵՄ-ի նախագահող երկիր, քանի որ այդպիսի պետություն գոյություն չունի: Հետո ինչ, որ կիպրական պետությունը ՄԱԿ-ի անդամ է, նրա անկախ գոյությունը դեռեւս 1959-ին Մեծ Բրիտանիայի եւ Հունաստանի հետ փոխհամաձայնությամբ երաշխավորել է նաեւ Թուրքիան, եւ նրան իրենց շարքերում են ընդգրկել Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկն ու ԵՄ-ը:

Ի դեպ, այս տրամաբանությունը սոսկ վարչապետ Էրդողանին յուրահատուկ չէ, այլ պետական քաղաքականության դրսեւորում է, որովհետեւ արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն օրերս Անկարայում, ընդունելով ԵՄ-ի ընդարձակման եւ հարեւանության քաղաքականության գծով Եվրոհանձնաժողովի հանձնակատար Ստեֆան Ֆյուլեին, ասել է. «Եթե Կիպրոսի հունական հատվածը, նախքան կիպրական հիմնահարցի կարգավորումը, միակողմանիորեն ստանձնի ԵՄ-ի նախագահությունը, ապա Թուրքիան կսառեցնի իր հարաբերությունները եվրոպական այս կառույցի հետ»:

Թվում էր, թե Ֆյուլեն համարժեք արձագանք կտա Դավութօղլուին, բայց ապարդյուն: Նա ընդամենը ԵՄ-Թուրքիա հարաբերությունները համատեղ ջանքերով ակտիվացնելու անհրաժեշտության մասին է խոսել: Այսինքն չի բացառվում, որ 2012-ին ԵՄ-ը Կիպրոսին զրկի նախագահող երկրի կարգավիճակից:

Խնդիրը, սակայն, ԵՄ-ում Կիպրոսի Հանրապետության 6-ամսյա նախագահությունը չէ, այլ Թուրքիայի օկուպացիայի արդյունքը հանդիսացող «Հյուսիսային Կիպրոսի թուրքական հանրապետության» եւ Կիպրոսի Հանրապետության միջեւ հավասարության նշան դնելու համար միջազգայնորեն ճանաչված կիպրական պետությունը Կիպրոսի հունական վարչակարգի հետ նույնացնելու, իսկ օկուպացումը նահատակներով արդարացնելու թուրքական նկրտումներն են: Օկուպացիան արդեն մասնատել է Կիպրոսը, խախտելով նրա միասնականությունն եւ տարածքային ամբողջականությունը: Թուրքական նկրտումների ընդառաջման դեպքում Կիպրոսի հյուսիսային հատվածի օկուպացիայի հետ կօրինականացվի նաեւ մասնատումը, թերեւս դրանով էլ կվերանա կղզու թուրքական հատվածը Թուրքիային կցելու անհրաժեշտությունը:

Այլ կերպ, Էրդողանի կառավարությունը, ի տարբերություն նախորդների, շեշտը դնում է Կիպրոսի թուրքական օկուպացիայով իրականացված մասնատումը օրինականացնելու վրա, այլ ոչ թե օկուպացված հատվածը Թուրքիային կցելով է սպառնում միջազգային ուժերին: Այդ ուժերը, ի դեմս ԱՄՆ-ի եւ Եվրոպայի, դեռեւս 1974-ին թույլ տվեցին թուրքական զորքերին ներխուժել Կիպրոս, 37 տարի շարունակ «ողջամտորեն» հանդուրժում են կղզու հյուսիսային հատվածի օկուպացումը:

Ինչ վերաբերում է ԵՄ-ին, ապա նա ոչ միայն հանդուրժում է այս ամենը, այլեւ անդամակցության բանակցություններ է ծավալում մի պետության հետ, որը շրջափակման ենթարկելուց եւ չճանաչելուց զատ, նաեւ կամայականորեն հանդգնում է ժխտել եվրոպական ընտանիքի մասը կազմող կիպրական պետության գոյությունը: Եթե միջազգային ուժերը թուրքական կողմին հիշեցնեին Կիպրոսի օկուպացման մասին, ապա վարչապետ Էրդողանը չէր ժխտի կիպրական պետության գոյությունը, օկուպացիան չէր արդարացնի նահատակներով, չէր խոսի Թուրքիայի արդարացիության մասին, ոչ էլ Կիպրոսի Հանրապետությանը նախագահող երկրի կարգավիճակից զրկելու անուղղակի պահանջ կներկայացներ ԵՄ-ին:

Լինելով օկուպանտ, Թուրքիան միջազգային հանրության, առավել եւս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկրների առջեւ Լեռնային Ղարաբաղի հայասանյան «օկուպացիայի» հարց ամենեւին չէր բարձրացնի: Համենայն դեպս, ինչպես պաշտոնական Վաշինգտոնն ու Փարիզը, այնպես էլ Հայաստանի ռազմավարական եւ ռազմական դաշնակիցը՝ Մոսկվան երբեւէ Կիպրոսի օկուպացման մասին չեն հիշեցրել Թուրքիային: Հենց դրանում են միջազգային ուժերի որդեգրած քաղաքականության երկերեսանիությունը, սնորությունը եւ չարանենգությունը, ընդ որում՝ ոչ միայն հայ ժողովրդի նկատմամբ:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲՅԱՆ

Օբաման եւ Մենատը փոխզիջման հասան բյուջեի հարցում

ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման Սենատի հետ փոխհամաձայնության է եկել եւ համաձայնել է պետական ծախսերի կրճատման ու հարկերի ավելացման ծրագրում ուղղումներ կատարել արտաքին փոխառությունների ծավալի մեծացման դիմաց: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

ԱՄՆ արտաքին պարտքի վերին սահմանի բարձրացմանը նվիրված բանակցություններում արձանագրվել է «որոշ առաջընթաց». նախագահը հավանություն է տվել սենատորների մշակած ծրագրին, որով նախատեսվում է 10 տարում 3,7 տրիլիոն դոլարով կրճատել երկրի բյուջեի պակասորդը: Այդ լուրը Օբաման անձամբ հայտնել է լրագրողներին սենատորների հետ հեռաձայնային բանակցությունների ավարտից հետո: «Նրանց առաջարկած սխեման ընդհանուր առմամբ համապատասխանում է այն նախագծին,

որի վրա մենք աշխատել էինք Սոցիալական տանը», ասել է Օբաման, նախազգուշացնելով, որ այլեւս ժամանակ չի մնացել «խորհրդանշական ժեստերի եւ կեցվածքների» համար:

Իրենք՝ սենատորները հայտարարել են, որ փաստորեն համաձայնության են եկել ծախսերը անհապաղ 500 մլրդ դոլարով կրճատելու շուրջ, եւ որ այդ թիվը մեկնակետ կդառնա առաջիկա 10 տարում պետական ծախսերը ավելի քան 4 տրիլիոն դոլարով նվազեցնելու համար:

Հանրապետական եւ դեմոկրատ 6 սենատորների խմբի մշակած ծրագիրը նախատեսում է բյուջեի եկամուտների մասը մեկ տրիլիոն դոլարով ավելացնել սոցիալական ապահովագրության եւ բուժօգնության Medicaid եւ Medicare ծրագրերի կրճատման, բյուջետային ծախսերի նվազեցման, հարկային օրենսդրության փոփոխման հաշվին, որպեսզի մինչեւ 2014 թվականը վերացվեն մի շարք արտոնություններ եւ կայունանա ԱՄՆ պետական պարտքի մակարդակը:

«Մենք կհասցնենք հարցը լուծել մինչեւ օգոստոսի 2-ը», ընդգծել է Օբաման իր ելույթում:

ՆԱՏՕ-ի ղեկավարը կանխատեսում է աշխարհում Եվրոպայի դիրքերի թուլացում

«Միջազգային ասպարեզում Եվրոպայի ազդեցությունը ասիճանաբար կթուլանա անհրաժեշտ տրանսպորտային հնարավորությունների եւ հեռախուզական տեղեկությունների հավաքման հույժ կարեւոր ռեսուրսների բացակայության պատճառով», հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը BBC-ին տված հարցազրույցում:

Նա Մեծ Բրիտանիային երախտագիտություն է հայտնել դաշինքի ռազմական գործողություններում ներդրած նշանակալի ավանդի համար, բայց միաժամանակ մտահոգություն է արտահայտել ՆԱՏՕ-ի եվրոպական մի շարք պետություններում ռազմական ծախսերի կրճատման կապակցությամբ:

Գլխավոր քարտուղարի խոսքերով՝ եթե այս միտումը չհաղթահարվի, ապա եվրոպացիների կորցրած դիրքերը շատ շուտով կզբաղեցնեն հզորացող այնպիսի երկրներ, ինչպիսիք են Չինաստանը եւ Հնդկաստանը:

Անցյալ ամիս ԱՄՆ պաշտպանության նախարար Ռոբերտ Գեյթսը հայտարարեց, որ Եվրոպան չի կարող հույս ունենալ, թե Ամերիկան անվերջ կֆինանսավորի ՆԱՏՕ-ի ռազմական գործողությունները: Գեյթսը նշեց, որ Եվրոպայում պաշտպանական կարիքների համար ՀՆԱ-ի ավելի քան 2 տոկոսը ծախսում է միայն 4 երկիր՝ Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Հունաստանը եւ Ալբանիան:

Հունիսին Անդերս Ֆոգ Ռասմուսսենը դաշինքի անդամ եվրոպական երկրներին արդեն կոչ էր արել ավելացնել պաշտպանական ծախսերը: Նա նշել էր, որ ՆԱՏՕ-ի գոյությունը ներկայումս անհրաժեշտ է ավելի, քան երբեւէ:

BBC-ին տված վերջին հարցազրույցում Ռասմուսսենը հայտարարել է. «Ապագայում միջազգային ասպարեզում կարեւոր դեր խաղալու եւ անվտանգության պահպանման միջազգային առաքելություններին մասնակցելու համար Եվրոպան պետք է ունենա նշանակալի ռազմական ներուժ, ինչը իր հերթին պահանջում է պաշտպանական ոլորտի ներդրումների համապատասխան մակարդակի պահպանում»:

Պ. Ք.

Սալվադոր Ալիենդեի ինքնասպանության վարկածը հաստատվեց

Չիլիի նախկին նախագահ Սալվադոր Ալիենդեն անձնասպան է եղել, այլ ոչ թե սպանվել է: Այս հետեւությանն են հանգել մի խումբ փորձագետներ, որոնք անցկացրել են 2011-ի մայիսի 23-ին հողից հանված Ալիենդեի աճյունի փորձաքննությունը: Փորձաքննության նպատակն էր ստուգել Ալիենդեի ինքնասպանության պաշտոնական վարկածը: BBC-ն հաղորդում է, որ փորձաքննության արդյունքներն արդեն փոխանցվել են Չիլիի իշխանություններին:

Պաշտոնական վարկածի համաձայն (որ ընդունում է նաեւ նախկին նախագահի ընտանիքը), Ալիենդեն ինքնասպանություն է գործել 1973-ի զինվորական հեղաշրջման ժամանակ: Երբ գեներալ Աուգուստո Պինոչետի կողմնակիցները գրոհել են նախագահական պալատը, Ալիենդեն իր գլխին կրակել է Կալաշնիկովի ավտոմատից, մինչ նախագահական անձնակազմին հրահանգել էր հեռանալ նստավայրից:

Անձնասպանության վարկածը կասկածի տակ առնվեց, քանի որ իշխանության գլուխ անցած Պինոչետի կողմնակիցները չանցկացրին Ալիենդեի աճյունի դատաբժշկական փորձաքննություն եւ ընտանիքին թույլ չտվեցին տեսնել նրա դիակը: Ասում էին, թե դիակի վրա հայտնաբերվել են հրազենային բազմաթիվ վերքեր:

2011-ի սկզբներին Չիլիի իշխանությունները Պինոչետի կառավարման տարիներին կատարված հանցագործությունների հետաքննության շրջանակներում որոշեցին հողից հանել Ալիենդեի աճյունը:

Փորձաքննության մասնակիցներից մեկը BBC-ին հայտնել է, որ իրենց հետազոտության արդյունքները կասկած չեն թողնում, որ նախկին նախագահը անձնասպան է եղել: Ալիենդեի գանգի վրա հայտնաբերվել է մեկ անցք, որ թողել են երկու գնդակներ: Փորձագետն ասել է, որ նման վնասվածքները բնորոշ են ինքնաձիգ զենքին, ինչպիսին է Կալաշնիկովի ավտոմատը:

Սալվադոր Ալիենդեն 1970-ին «ձախերի» առաջին ներկայացուցիչն էր, որ ժողովրդավարորեն ընտրվեց Չիլիի նախագահ: Իր կառավարման տարիներին նա անցկացրեց մի շարք տնտեսական բարեփոխումներ (այդ թվում՝ ազգայնացրեց հանքարդյունահանման ճյուղը), որոնք հակասական ազդեցություններ առաջացրին ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում: 1973-ի սեպտեմբերին Չիլիում Մ. Նահանգների քաջալերմամբ տեղի ունեցավ զինվորական հեղաշրջում, որի հետեւանքով իշխանության գլուխ անցավ բռնապետ Պինոչետը, իսկ Ալիենդեն զոհվեց: Պինոչետը Չիլիում կառավարեց մինչեւ 1990 թվականը: Նրա բռնապետության տարիներին երկրում անհետ կորավ ավելի քան 3000 մարդ:

«Փյունիկ» հիմնադրամի նվիրատվությունը Մատենադարանին

«Փյունիկ» համահայկական բարեգործական հիմնադրամը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահում Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանը: Երեկ հիմնադրամի ղեկավարությունը կրկին նվիրատվություն կատարեց. այս անգամ Մատենադարանին բարեգործները նվիրեցին միջնադարյան ձեռագրեր, բանաստեղծ Եղիշե Չարենցի ձեռագրերն ու Վարդգես Սուրենյանցի 23 գծանկարն՝ ամփոփված մի տետրակի մեջ:

Մատենադարանի գլխավոր ավանդապահ **Գեւորգ Տեր-Վարդանյանը «Ազգի»** հետ զրույցի ժամանակ պատմեց՝ վերոնշյալ միջնադարյան ձեռագրերը մինչ նվիրատվությունը պատկանել են առանձին անհատների: «Փյունիկ» բարեգործական հիմնադրամը վճարել է անհատներին ու գնված ձեռագրերը նվիրաբերել Մատենադարանին: Գեւորգ Տեր-Վարդանյանը հավելում է՝ արդեն 3 տարի այդ ձեռագրերը պահվում են Մատենադարանում: Այսինքն՝ դրանց նախկին տերերն այնքան բարեխիղճ են գտնվել, որ մինչ անհրաժեշտ գումարի վճարումը նախընտրել են ձեռագրերը թողնել ապահով պայմաններում:

«Փյունիկ» հիմնադրամի համանախագահ **Գաբրիել Չեմպերճյանն** էլ ասում է, որ Մատենադարանին աջակցելու են նաեւ այլ հարցերում: Հիմնադրամի ջանքերով Մատենադարան կբերվեն նոր սարքավորումներ:

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյանն** էլ բարեգործներին իր երախտիքի խոսքն ուղղելուց հետո ներկայացրեց երեկ նվիրաբերված ձեռագրերը: Դրանցից մեկը 17-րդ դարի, մյուսը 13-րդ դարի Ավետարաններ են, որոնց մեջ զետեղված են մանրանկարչության յուրահատուկ նմուշներ: Հիմնադրամը երեկ նվիրաբերեց նաեւ 18-րդ դարի բարձրարվեստ գրչության մի Ղուրան, Ե. Չարենցի ձեռագրերի մի հավաքածու եւ Վարդգես Սուրենյանցի գծանկարները: Չարենցի ձեռագրերի հավաքածուն ներառում է բանաստեղծի 47 ինքնագիր բանաստեղծությունները, նամակներն ու այլ գործեր, որոնք նա գրել է կյանքի վերջին տարիներին:

Թե ինչպե՞ս են Չարենցի ձեռագրերը հասել Մատենադարան, այս հարցի շուրջը խոսեց արվեստաբան, գրականագետ **Երվանդ Տեր-Խաչատրյանը**. «Մի քանի տարի առաջ մեզանում խոսում էին, թե ինչ-որ մարդկանց մոտ պահվում են Չարենցի ձեռագրերը, որոնք միգուցե տարվեն արտասահման: Սակայն եղելությունը հետեւյալն է՝ այս ձեռագրերը կազմում էին ավելի ամբողջական, 250 էջանոց հավաքածու ու գտնվում էին թարգմանիչ, արվեստաբան Աշոտ Շաբոյանի մոտ: Եթե չլիներ վերջինս, հավաքածուն արդեն վաղուց արտասահմանում կլիներ, քանի որ գայթակղիչ առաջարկները շատ էին»: Երվանդ Տեր-Խաչատրյանի փոխանցմամբ՝ այնուհետեւ մշակույթի նախարարությունը որոշակի գումարով ձեռք բերեց ձեռագրերի մի մասն ու հանձնեց Գրականության ու արվեստի թանգարանին. «Իսկ մյուս մասը՝ շուրջ 100 էջ, որոնք հիմա գտնվում են Մատենադարանում, մնացին Աշոտ Շաբոյանի մոտ, քանի որ պարզվեց՝ դրանք գնելու համար նախարարությունը չունի համապատասխան միջոցներ»: Հետագայում ձեռագրերը գնելու այլ առաջարկներ են եղել, սակայն Աշոտ Շաբոյանի հոգածության շնորհիվ դրանք չեն տեղափոխվել արտասահման:

«Օրեր առաջ Լիբանանում էի, երբ խոսք գնաց Չարենցի այդ ձեռագրերի շուրջը, Գաբրիել Չեմպերճյանն անմիջապես նշեց, որ դրանք արտասահման գնալ չեն կարող, քանի որ դրանց տեղը Հայաստանն է», ասաց Երվանդ Տեր-Խաչատրյանը՝ հավելելով, որ ավելի պատվավոր տեղ, քան Մատենադարանն է, Չարենցի ձեռագրերի համար լինել չէր կարող:

Հրաչյա Թամրազյանն էլ իր խոսքում նշեց, որ Մատենադարանի ֆոնդերի հարստացմանը մեծ ուշադրություն է դարձվում. «Եվ մեր հավաքածուները հարստանում են բացառիկ արժեքներով»:

Մատենադարանը հայ ժողովրդի հոգեւոր արժեքների կենտրոնն է, եւ «Փյունիկ» հիմնադրամն իր առջեւ նպատակ է դրել հնարավորության սահմաններում հայ հոգեւոր արժեքները, որոնք ամփոփված չեն այստեղ, վերադարձնել հայ ժողովրդին: «Փյունիկ» հիմնադրամի համանախագահ **Լեւոն Սարգսյանի** խոսքով՝ հոգեւոր արժեքները պետք է կենտրոնացված լինեն մի տեղում՝ Մատենադարանում, ու լինեն պետական հովանավորության ներքո. «Այդ արժեքները չպետք է մնան անհատների մոտ»:

Ի.Պ.

Նախագահը հայ գրողի տան մէջ

Վախթանգ Անանեան եւ Հայկ Նագգաշեան Լուսակերտի տան պարտէզին մէջ, 1977:

1963-ի ամրանն էր, Եթովպիայէն Պէյրութ գալով միացայ Հայաստան հրաւիրուած ուսուցչական խումբին եւ հայրենիքս տեսայ առաջին անգամ ըլլալով:

Յաջորդ տարին ափրիկեան կեցութեանս վերջ տալով Պէյրութ վերադարձայ եւ հետզհետէ կլանուեցայ ընկերային ու գրական կեանքին մէջ: 1951-64 Եթովպիա ապրած ըլլալով, բնական ու կենդանական աշխարհէն եւ արկածախնդրական կեանքէն հարուս փորձառութիւն ունէի, որ գրականութեան վերածեցի: Այդ նիւթով հարուստ պատմուածքներ սկսան հրատարակուիլ «Շիրակ» ամսագրին մէջ, որուն խմբագրական կազմին մաս կազմեցի խմբագրատես Օնիկ Սարգիսեանի կողքին: 1979-ին հրատարակուեցաւ «Որսորդի ուղիներով» խորագրով առաջին գիրքս:

1977-ին հայրենիք կատարած երկրորդ այցելութեանս ընթացքին առաջին գործս եղաւ Վախթանգ Անանեանին հանդիպիլ: Ան զիս ընդունեց Լուսակերտի պտղատու ծառերով շրջապատուած իր տան մէջ, որուն կից կը գտնուէր նաեւ Հրաչեայ Քոչարի բնակարանը: Ան Երեւանի մէջ ալ տուն ունէր, որ յիշածիս համաձայն, Գրիգոր Լուսաւորիչ փողոցի, ձկան խանութի վերեւն էր: Երբ հեռաձայնեցի՝ ժամանումս հաղորդելու համար իրեն, չափէն աւելի ուրախացաւ եւ պատուիրեց, որ կիրակի օր որեւէ ժամադրութիւն չառնեմ, ամբողջ օրը իրեն վերապահելով:

- Աղջիկս՝ Նելլին եւ եղբայրը կուգան քեզ Լուսակերտ կը բերեն, բաժակ մը ֆոնիֆոով հայավարի խորոված ճաշակելու համար:

Դասական խորովածը ճոխացած էր նաեւ լոր ու կաքաւով, որոնք բերեր էին գիւղացիները, ի յարգանս իրեն եւ իր հիւրերուն:

Անմոռանալի այդ օրը կեանքիս մեծագոյն անակնկալը եղաւ Հայաստանի Գերագոյն խորհուրդի նախագահ Նագուշ Յարութիւնեանին ներկայութիւնը: Ապշած ու հիացած էի, որ երկրին նախագահը հայ գրողի տան հիւրն էր, եւ որուն հետ տանտէրը կը խօսէր մտերմաբար, հաւասարէ-հաւասար: Զիս նախագահին ներկայացնելէ յետոյ, անակնկալորէն յայտնեց նաեւ, թէ ծրագրած է ինձմէ գիրք մը հրատարակել: «Ափրիկեան անտառներուն մէջ» խորագրեալ այդ գիրքը լոյս տեսաւ 1982-ին, «Որսորդի ուղիներով» գրքիս բովանդակութեամբ, 10.000 տպաքանակով, որմէ ինծի համար 20 օրինակ միայն կրցեր էր վերապահել:

Վախթանգ Անանեան հիւանդ էր ընդհանրապէս, անորոշ վատառողջ վիճակով: Ժամանակի ընթացքին յայտնուեցաւ, որ խլիրդէ (cancen) կը տառապէր: Դեղագիտական ասպարէզի մէջ աշխատելուս համար գործի լծեցի բոլոր ծանօթութիւններս, իրեն հայթայթելով խլիրդի նորայայտ դեղերը: Շրջան մը ղրկած դեղերս բարերար ազդեցութիւն գործած ըլլալու խաբկանքը տալէ յետոյ, ան հրաժեշտ տուաւ այս աշխարհին, իր որակով հարստացնելու համար հայրենի հողը:

Կիսանանք թէ մշակոյթի նախարարութիւնը ծրագրած է Դիլիջանի անտառը եւ Երեւանի փողոցերէն մէկը Վախթանգ Անանեան անուանել: Մեծապէս գնահատելով մշակոյթի նախարարութեան որոշումը, ես պիտի առաջակէի, որ խոնարհելով հանգուցեալի վաստակին առջեւ, Լուսակերտի իր տունը կոչուէր Վախթանգ Անանեան տուն-թանգարան: Այդ տունը, ուր ապրած եւ ստեղծագործած է Վ. Անանեան, կարելի չէ որեւէ այլ նպատակի ծառայեցնել: Ասոր զուգահեռ՝ յարգանքի այլ արտայայտութիւններ ողջունելի են անշուշտ:

Հայրենի բնութեան ու կենդանական աշխարհին անզուգական երգիչը ոչ միայն Հայաստանի ժողովուրդին, այլեւ սփիւռքահայութեան ամբողջ հայութեան պարծանքն է, եւ տուն-թանգարանի վերածուած անոր բնակարանը ներկայ թէ գալիք սերունդներուն՝ գրասէրներուն, գրողներուն եւ ընդհանրապէս մշակոյթի բոլոր գործիչներուն ուխտավայրը պէտք է հանդիսանայ, յետ մահու եւս ծառայելով ազգին ու հայրենիքին:

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇԵԱՆ

Մոնրեալ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բելա Տարը հեռանում է կինոյից

Հունգարացի հայտնի ռեժիսոր Բելա Տարը իր կարիերան որպես սիրող կինոռեժիսոր սկսել է 16 տարեկանից: 20 տարեկանում «Ընտանեկան բույն» խաղարկային ֆիլմով կայացել է նրա դեբյուտը: Այժմ նա Գերմանիայում Բեռլինի կինոյի եւ հեռուստատեսության ակադեմիայի դոցենտ է: «Ոսկե ծիրան» երեւանյան 8-րդ կինոփառատոնին ներկայացրել էր «Նզովք», «Լոնդոնցի մարդը», «Թուրինյան ձին» ֆիլմերը: Փառատոնի եզրափակիչ հանդիսությունից առաջ Բելա Տարը պատասխանեց «Ազգի» հարցերին:

Բելա Տարի համար կինոյի լեզուն խոսքերը չեն, այլ պատկերները: «Ազգի» այն հարցին, թե ռեժիսորը որոշել է թողնե՞լ կինոն, Բելա Տարը ասաց. «Անկեղծորեն ասեմ, չեմ հոգնել, բայց եթե լուրջ խոսենք՝ 34 տարի է, որ զբաղվում եմ այս գործով եւ ինչ-որ առումով գտել եմ իմ լեզուն, իմ ոճը եւ կարծում եմ, որ կարողացել եմ ստեղծել ինչ-որ բան: Եվ այդ ամենից հետո ինձ համար կարծես շրջանը փակվել է եւ իմաստ չունի որեւէ բան կրկնել, կամ այլ ձեւով անել: Դա առաջին հերթին հարգանք է ձեր, հանդիսատեսի հանդեպ, որովհետեւ դուք հասուն մարդիկ եք եւ ամեն անգամ ռեժիսորից ակնկալում եք նոր բան: Իսկ թե ինչով զբաղվեմ, կփորձեմ կյանքից վերցնել այն ամենը, ինչը բաց եմ թողել այս 34 տարիների ընթացքում ու իմ տիկնոջ հետ, որը մոնտաժող է, կվայելեմ կյանքը, կշրջագայեմ: Երեւի նաեւ Հայաստան գանք, որովհետեւ այս բիբլիական հողը շատ հետաքրքրական պատմություններ ունի իր խորքերում: Իսկ մինչ այդ մենք Հունգարիայում կինոֆիլմ արտադրող ընկերություն ունենք եւ փորձում ենք պաշտպանել այն մարդկանց, ովքեր կինոինդուստրիայում տեղ չունեն եւ իրենց ֆիլմը կինոշուկա չեն կարողանում ներկայացնել: Ես լավ ռեժիսոր համարում եմ նրանց, ովքեր ունեն ուրույն ձեռագիր, կինոյի լեզու, որ թեկուզ մի քանի կադրից արդեն ճանաչում ես ու հիանում, օրինակ, Ֆելլինին, էյզենշտեյնը եւ շատ ուրիշներ»:

Ինտերնետը որքանո՞վ կարող է օգնել կամ վնասել կինոյի զարգացմանը մեր հարցին Բելա Տարը պատասխանեց. «Ես տանը ինտերնետ չունեմ եւ չեմ սիրում այդ հաղորդակցման միջոցը: Դեմ եմ կյանքը, սերը, սեքսը համացանց տեղափոխելուն եւ ինտերնետը ոչ մի բանով չի օգնում մարդկային հարաբերություններ ձիշտ ներկայացնելու գործում: Կյանքի իմաստը չգիտեմ, ես ֆիլմեր եմ արել պարզ ու հասարակ՝ ցույց տալով, թե ինչպիսին են մարդիկ: Այնպես եմ ես իմ ֆիլմերի տեսարանները նկարահանում, որ մոնտաժելու շատ քիչ բան է մնում եւ քիչ ժամանակ եմ ծախսում: Մի անգամ Գոդարն ասել է, որ մոնտաժը պետք է անել հենց կամերայով նկարելիս: Հենց այդպես էլ անում եմ, քանի որ չեմ ցանկանում երկար մնալ մոնտաժի մութ սենյակում՝ կյանքիս լավագույն օրերը անցկացնել այդ վայրում»:

Տարը ցավով էր նշում, որ մեկ տարի է հունգարական կինոյում ոչինչ չի կատարվում, ֆիլմ չի արտադրվում, չնայած որ ունեն լավ ռեժիսորներ: Իսկ պատճա՞ռը: «Դա գալիս է քաղաքական գործիչներից»: Այնուհետեւ նա անդրադառնալով Աստծո գոյության հարցին ասաց. «Երբ խոսում ենք Աստծո մասին, կարծես ուզում ենք ասել, որ գտել ենք մեկին ու ամեն ինչ ուզում ենք բարդել նրա վրա: Մինչդեռ ամեն ինչ կախված է մեզանից եւ մենք ենք ստեղծում այս աշխարհը իր գույներով»:

Բելա Տարը կտրականապես որոշել է այլեւս ֆիլմ չնկարել: Հիշեցնեմ, որ նրա վերջին ֆիլմը՝ «Թուրինյան ձին» (2011 թ.) Բեռլինի միջազգային կինոփառատոնին արժանացել է «Արծաթե արջ» FIPRECI-ի ժյուրիի մրցանակին: Ռեժիսորը նկարահանել է շուրջ 30 ֆիլմ, որոնք համաշխարհային կինոֆոնդի գանձարանը հարստացրեցին: Իսկ երեւանյան «Ոսկե ծիրան»-ից Բելա Տարը իր հետ տուն տարավ «Փարաջանովյան տալեր» գլխավոր մրցանակը՝ կինոարվեստում ունեցած մեծ ավանդի համար:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Քարեւ, սիրելի՛ խմբագրություն

«**Ազգ**» պարբերականի միջոցով ուզում եմ շնորհավորել մեր ժամանակների լուսավոր, խիզախ ու շիտակ (ցավոք, հիմա քիչ են) մտավորականներից մեկի՝ իմ շատ սիրելի հեղինակ **Պերճ Զեյթունցյանի** ծննդյան օրը: Մաղթում եմ ամուր առողջություն, արեւշատություն, գրքերի ու սցենարների հրավառություն: Թո՛ղ երիցս օրհնվի խոհուն մտավորականի լուսավոր ճակատը:

Գեղարվեստական գիրք ընթերցել շատ եմ սիրում, թատրոն հաճախելն իմ թուլությունն է: Բազմիցս ծափահարել եմ իմ ամենահամակրելի արտիստ Գուժ Մանուկյանի զորեղ արքաներին:

Պարո՛ն Զեյթունցյան. եթե մի դիպվածով հայոց աշխարհում (թող լեզուս պատանձվի) մեկ ընթերցող մնա, դա Գալոյան Ֆլորան է:

Պերճ Զեյթունցյանը Հայաստանից չհեռացավ, չձգտեց արտերկրի բարեկեցիկ կյանքի (լրիվ ուներ այդ հնարավորությունը), այլ մնաց իր ժողովրդի, իր ընթերցողի, իր հանդիսատեսի հետ: Խիզախ մարդկանց ներկայությունից իմ արիությունը միշտ ավելանում է: Խիզախությունը կյանքի խոչընդոտներն աննշան է դարձնում: Նախ՝ շնորհակալություն դրա համար:

Սիրելի՛ «**Ազգ**», Ձեր համարներից մեկում կուզեի ընթերցել սիրելի հեղինակիս իմաստուն խոսքը ազգակործան աղանդների մասին:

Նախապես շնորհակալություն:

Հարգանքով՝ Ֆլորա Գալոյան

Երեւան

Կրկին գողացված արժեքների մասին

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքից գողացված հայկական 5 մանրանկարի ու 2 յուղանկարի հետ կապված պատմությանն «**Ազգը**» արդեն ադրադարձել է: Հիշեցնենք, որ հունիսի 12-ին 2 հայեր Լոնդոնում մոտեցել են Ներսես ավագ քահանա Ներսեսյանին՝ յուղանկարների ու մանրանկարների վերաբերյալ նրա կարծիքը իմանալու համար:

Հետաքրքրական է՝ իսկ կատարվածի առնչությամբ ի՞նչ քայլեր է ձեռնարկել Մատենադարանը: Այս հարցով դիմեցինք Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրեն Հրաչյա Թամրազյանին: Նրա խոսքով՝ այս ուղղությամբ Մատենադարանը նույնպես աշխատանքներ ձեռնարկել է. «Մենք եւս ուզում ենք իմանալ իսկությունը»:

Ի. Պ.

Հայ շախմատիստները միանձնյա գլխավորեցին աղյուսակը

Չինաստանի Նինբո քաղաքում ընթացող շախմատի աշխարհի թիմային առաջնության 4-րդ տուրում Հայաստանի հավաքականի մրցակիցը մրցաշարի հեռնաղաի Եգիպտոսի ընտրանին էր, որը պարտվել էր նախորդ 3 հանդիպումներում: Ուստի հայ շախմատիստներից այդ մրցախաղում խոշոր հաշվով հաղթանակ էր ակնկալվում, ինչն էլ ի վերջո գրանցվեց:

Եգիպտացիների հետ մրցավեճում մեր հավաքականի մարզիչ Արշակ Պետրոսյանը հանգստանալու հնարավորություն էր ընձեռել թիմի առաջատար Լևոն Արոնյանին: Նրան առաջին խաղատախտակի վրա փոխարինել էր Սերգեյ Մովսիսյանը, որը սպիտակներով 40-րդ քայլին պարտության մատնեց Ահմեդ Ադլիին: 2-րդ խաղատախտակի վրա էլ իր 2-րդ հաղթանակը տոնեց Վլադիմիր Հակոբյանը, որը պարտության մատնեց Բասեմ Ամինին: Որոշ ժամանակ անց մրցաշարում իր առաջին հանդիպումն անցկացնող Հայաստանի այս տարվա չեմպիոն Ռոբերտ Հովհաննիսյանը հաղթական 3-րդ միավորը պարգևեց մեր թիմին՝ առավելության հասնելով Մոհամեդ Էզաթի նկատմամբ, միաժամանակ վճռելով մրցակցության ելքը: Վերջինն իր մրցավեճն ավարտած Գաբրիել Սարգսյանը 59-րդ քայլին հաշտություն կնքեց Սամի Շոկերի հետ:

Այս հաղթանակի շնորհիվ Հայաստանի հավաքականը 6 միավորով միանձնյա գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Դրան նպաստեց

նաեւ Ադրբեջանի հավաքականի հաղթանակը ռուսների նկատմամբ՝ 3-1: Ադրբեջանցիների հաղթանակն ապահովեցին Վուղար Հաճիմովն ու Գադիր Հուսեյնովը, որոնք պարտության մատնեցին համապատասխանաբար Ալեքսանդր Գրիշչուկին եւ Պյոտր Սվիդլերին: Կարյակին-Ռաջաբով, Նեպոմնյաչնի-Մամեդյարով պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի:

Անհաջողության մատնվեց նաեւ Ուկրաինայի հավաքականը, որը 1,5-2,5 հաշվով պարտվեց հունգարացիներին: Վերջիններիս հաղթանակն ապահովեց Պետեր Լեկոն՝ առավելության հասնելով Վասիլի Իվանչուկի նկատմամբ: Մյուս պարտիաներն ավարտվեցին ոչ-ոքի: Չինաստանի հավաքականը մոտեցավ առաջատարին՝ 3,5-0,5 հաշվով պարտության մատնելով ԱՄՆ-ի ընտրանուն: Առաջին հաղթանակը տոնեցին հնդիկ շախմատիստները՝ 2,5-1,5 հաշվով պարտության մատնելով իսրայելցիներին:

4 տուրից հետո առաջատարների խմբում նեղվածք է: Միանգամից չորս հավաքականներ՝ Ադրբեջանը, Չինաստանը, Ռուսաստանն ու Հունգարիան 5-ական միավորով հետաքրքրում են հայ շախմատիստներին, որոնք միակ անպարտելիներն են: 5-րդ տուրում Հայաստանի հավաքականը կմրցի Չինաստանի ընտրանու հետ: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Ադրբեջան-Ուկրաինա հանդիպումը: Կկայանան նաեւ Եգիպտոս-Ռուսաստան, Հնդկաստան-ԱՄՆ, Հունգարիա-Իսրայել մրցախաղերը:

«Փյունիկի» խայտառակ պարտությունները մեծ հարված են հայկական ֆուտբոլի հեղինակությանը

Հայկական ֆուտբոլի առանց այն էլ սասանված հեղինակությանը եւս մեկ զգալի հարված հասցրեց երկրի բազմակի չեմպիոն «Փյունիկը», որը չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլի պատասխան խաղում էլ խաղադաշտը թողեց խոշոր հաշվով պարտված: Պլզենում Հայաստանի չեմպիոնը, որը վերջին տասնամյակում հայկական ֆուտբոլի խորհրդանիշն ու դրոշակակիրն է, խայտառակ պարտություն կրեց «Վիկտորիայից»՝ մրցակցին զիջելով 1-5 հաշվով: Եվրագավաթների խաղարկություններում դա փյունիկցիների մինչ օրս կրած ամենախոշոր հաշվով պարտությունն է: Այսպիսով, երկու խաղերի ընդհանուր արդյունքով «Փյունիկը» «Վիկտորիայից» ջախջախիչ պարտություններ կրեց ընդհանուր 1-9 հաշվով, ինչը պարզապես խայտառակություն է:

«Հանրապետական» մարզադաշտում 4-0 հաշվով փյունիկցիներին ջախջախելուց հետո թվում էր, թե սեփական հարկի տակ չեխերն առանձնակի ջանքեր չեն գործադրի 2-րդ խաղում էլ հաջողության հասնելու համար, քանի որ գործնականում լուծել էին հաջորդ փուլի ուղեգիր հարցը: Սակայն ինչպես ցույց տվեց հանդիպումը, դաշտի տերերն իրենց գոլային ծարավը չէին հագեցրել: «Վիկտորիան» ողջ հանդիպումն անցկացրեց հարձակողական ոճով, անընդհատ գրոհում եւ վտանգավոր պահեր էր ստեղծում փյունիկցիների դարպասին: Մեր պաշտպանները չէին հասցնում մրցակցի արագաշարժ ֆուտբոլիստներին հսկողության տակ առնել, որոնք անարգել ներխուժում էին «Փյունիկի» տուգանային հրապարակ: Արդեն առաջին խաղակեսում երկու անգամ Մարեկ Բարոշը եւ մեկ անգամ Դանիել Կոլարժը գրավեցին «Փյունիկի» դարպասը՝ երկու խաղերի ընդհանուր հաշիվը դարձնելով 7-0:

Ընդմիջումից քիչ անց Էդգար Մալաֆյանի անհասկանալի անցումն ավարտվեց դարպասի գրավումով: Սակայն 57-րդ րոպեին Դանիել Կոլարժը կրկին հաշվի տարբերությունը հասցրեց 3-ի: Իսկ ավելացված ժամանակում Վացլավ Պիլարժն ավարտեց «Փյունիկի» ջախջախումը՝ 5-1:

Ահա այսպիսի տխուր ավարտ ունեցավ «Փյունիկի» համար եվրագավաթների ընթացիկ խաղարկությունը, որն ամենաանհաջողն էր թիմի կենսագրությունում: Վերջին 5 խաղարկություններում փյունիկցիներն անցկացրած 10 հանդիպումներում ընդամենը մեկ գոլազուրկ ոչ-ոքի են գրանցել իրենց օգտին՝ պարտվելով մյուս 9 խաղերում: «Փյունիկը» խփել է ընդամենը 3 գոլ, բաց է թողել 23 գնդակ: Չնայած այս անհաջողություններին, «Փյունիկի» ղեկավարությունը ոչինչ չի ձեռնարկում թիմն ուժեղացնելու համար՝ ապավինելով միայն սեփական մարզադպրոցի սաներին: Իսկ եվրագավաթներում անփորձ ու երիտասարդ ֆուտբոլիստներով դժվար է հաջողություն ակնկալել: Եթե «Փյունիկը» չի մտածում իր հեղինակության մասին, ապա պետք է գոնե հոգ տանի հայկական ֆուտբոլի վարկանիշի մասին, որը տարեցտարի նվազում է: ՈՒԵՖԱ-ի վարկանիշային աղյուսակում այսօր Հայաստանը հայտնվել է 48-րդ տեղում 2,208 միավորով եւ գերազանցում է միայն եվրոպական ֆուտբոլի բացահայտ հետնապահներ Լյուքսեմբուրգին, Լիխտենշտեյնին, Ֆարերներին, Անդորրային եւ Սան Մարինոյին:

Չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլում «Փյունիկից» ավելի անհաջող հանդես եկավ միայն Ուելսի «Բանգոր Սիթին», որը հյուրընկալվելիս 0-10 հաշվով պարտվեց ֆիննական ՀԻԿ-ին: Առաջին խաղում էլ ֆիններ 3 անպատասխան գնդակ էին խփել մրցակցի դարպասը: 1992-ից սկսած, երբ կազմավորվեց չեմպիոնների լիգան, ֆինների հաղթանակը ռեկորդային է: Իսկ չեմպիոնների գավաթի խաղարկություններում ամենախոշոր հաշվով հաղթանակը տոնել է Բուխարեստի «Դինամոն», որը 1973-ին 11 անպատասխան գնդակ է խփել «Կրուզեյդերսի» դարպասը: Իսկ եվրոգավաթների ողջ պատմության ընթացքում ամենախոշոր հաշվով հաղթանակի ռեկորդը պատկանում է Լիսաբոնի «Սպորտինգին», որը 1963-ին Կիպրոսի «Ապոելին» պարտության է մատնել 16-1 հաշվով:

Պայքարից դուրս մնաց նաեւ Ադրբեջանի չեմպիոն Բաքվի «Նեֆչին», որն առաջին խաղում Զագրեբի «Դինամոյին» 0-3 հաշվով պարտվելուց հետո սեփական հարկի տակ բավարարվեց գոլազուրկ ոչ-ոքիով:

Նախկին ԽՍՀՄ հանրապետությունների թիմերից հաջորդ փուլի ուղեգիր նվաճեցին Բելառուսի ԲԱՏԷ-ն եւ Լիտվայի «Էկրանասը»: ԲԱՏԷ-ն սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթեց Հյուսիսային Իռլանդիայի «Լինֆիլդին» (առաջին խաղն ավարտվել էր ոչ-ոքի՝ 1-1), իսկ «Էկրանասը» 2-րդ խաղում էլ սեփական դաշտում առավելության հասավ Մալթայի «Վալետայի» նկատմամբ: Անհաջողության մատնվեց Լատվիայի չեմպիոն «Սկոնտոն», որը 2-րդ խաղում էլ զիջեց լեհական «Վիսլային» (0-2): Պայքարից դուրս մնաց նաեւ ղազախական «Տոբոլը», որն առաջին խաղում Սլովակիայի «Սլովանին» 0-2 հաշվով զիջելուց հետո սեփական հարկի տակ չկարողացավ ռեւանշի հասնել (1-1):

Մյուս խաղերում գրանցվեցին այսպիսի արդյունքներ (փակագծում առաջին հանդիպման հաշիվն է). «Լիտեքս» (Բուլղարիա)-«Մոգրեն» Չեռնոգորիա՝ 3-0 (2-1), «Դյուդելանժ» (Լյուքսեմբուրգ)-«Մարիբոր» (Սլովենիա)՝ 1-3 (0-2), «Շկենդիա» (Մակեդոնիա)-«Պարտիզան» (Սերբիա)՝ 0-1 (0-4), «Տորսհավն» (Ֆարերներ)-«Մալմյո» (Շվեդիա)՝ 1-1 (0-2), «Ֆլորա» (Էստոնիա)-«Շեմրոկ Ռովերս» (Իռլանդիա)՝ 0-0 (0-1):

Վալտեր Մարգարյանը 2 մեդալ նվաճեց

Բաքվում անցկացված լողափնյա ազատ ըմբշամարտի աշխարհի գավաթի հերթական խաղարկությանը 27 երկրների թվում առաջին անգամ մասնակցեց Հայաստանի հավաքականը, որի կազմում ընդգրկված էին 4 ըմբիշներ: Առավել հաջող էր երեւանցի 19-ամյա ըմբիշ Վալտեր Մարգարյանի ելույթը: «Դինամոյի» ավագ մարզիչ Ժորա Հովհաննիսյանի սանը մինչեւ 70 կգ քաշային կարգում մեծահասակների մրցաշարում գրավեց 3-րդ տեղը, իսկ երիտասարդների պայքարում ճանաչվեց 2-րդը:

Եզրափակիչ մենամարտի ժամկետն ու վայրը հայտնի են

Երկրորդ միջինքաշային կարգի Super Six մրցաշարի կազմակերպիչ Showtime հեռուստաընկերությունը եւ եզրափակիչի մասնակիցներ Անդրե Ուորդի ու Կառլ Ֆրոչի պրոմոութերները համաձայնեցրել են վճռորոշ մենամարտի անցկացման վայրն ու ժամկետները: Այն տեղի կունենա հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Ատլանտիկ Սիթիում:

WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Կառլ Ֆրոչի համար այդ մենամարտը կլինի օսար երկրում անցկացրած 4-րդ անընդմեջ մրցախաղը: Իսկ ահա WBA-ի վարկածով 2-րդ միջինքաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Անդրե Ուորդի համար այդ մենամարտը Super Six մրցաշարում առաջինն է, որ անցկացվելու է իր հարազատ Կալիֆորնիայից դուրս:

Եզրափակիչի առաջին մասնակիցն Ուրուգվայն է

Ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկությունում հայտնի դարձավ եզրափակիչի առաջին մասնակիցը: Ուրուգվայի հավաքականը 2-0 հաշվով հաղթելով Պերուի ֆուտբոլիստներին, իրավունք ստացավ եզրափակիչ խաղում վիճարկելու պատվավոր մրցանակը: Ուրուգվայցիներին հաղթանակ պարգեւեցին Սուարեսի խփած 2 գնդակները: Եզրափակիչում ուրուգվայցիների մրցակիցը որոշվեց երեկ կեսգիշերին կայացած Պարագվայ-Վենեսուելա խաղում:

Ուրուգվայի հավաքականը 14 անգամ հաղթող է ճանաչվել Ամերիկայի գավաթի խաղարկությունում: Վերջին անգամ ուրուգվայցիներին հաջողությունն ուղեկցել է 1995-ին սեփական հարկի տակ անցկացված մրցաշարում: Իսկ ահա նախորդ 5 մրցաշարերից 4-ում (1997, 1999, 2004, 2007) հաղթող են ճանաչվել Բրազիլիայի հավաքականի ֆուտբոլիստները, որոնք ընթացիկ առաջնությունում արդեն քառորդ եզրափակիչում վայր դրեցին չեմպիոնի լիազորությունները:

Բաշիստան եւ Մենեզեսը կշարունակեն աշխատանքը

Թեեւ ֆուտբոլի Ամերիկայի գավաթի խաղարկությունում Արգենտինայի եւ Բրազիլիայի հավաքականներն անհաջողության մատնվեցին, սակայն դա ոչնչով չազդեց այդ ընտրանիները գլխավորող Սերխիո Բաշիստայի եւ Մանո Մենեզեսի մարզչական ճակատագրերի վրա: Երկուսն էլ կշարունակեն աշխատանքը: Արգենտինայի ֆուտբոլի ֆեդերացիայի ղեկավարությունը հավատում է, որ Սերխիո Բաշիստային կհաջողվի հավաքականը ճգնաժամից դուրս հանել, իսկ Բրազիլիայի ֆուտբոլային գերատեսչությունը գտնում է, որ Մանո Մենեզեսի գլխավորությամբ ազգային ընտրանին ի վիճակի է 2014-ին սեփական հարկի տակ 6-րդ անգամ արժանանալու աշխարհի չեմպիոնի տիտղոսին:

Սերխիո Բաշիստան ընդամենը 11 ամիս է գլխավորում Արգենտինայի հավաքականը, ուստի առայժմ դժվար է նրանից բարձր արդյունքներ պահանջել: Ճիշտ է, Ուրուգվայի հավաքականից կրած պարտությունից հետո որոշ լուրեր տարածվեցին, թե իբր Դիեգո Մարադոնան վերադառնալու է հավաքական, սակայն երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Խուլիո Գրոնդոնան, որի հարաբերությունները սրված են համաշխարհային ֆուտբոլի «աստղի» հետ, հերքեց այդ տեղեկատվությունը, նշելով, որ Բաշիստան մնում է իր պաշտոնում:

Նոնիտո Դոները թերեւս զրկվի չեմպիոնական գոտուց

Բռնցքամարտի համաշխարհային խորհրդի (WBC) ղեկավարությունը զգուշացրել է այդ կազմակերպության վարկածով թեթեւագույնքաշային կարգի աշխարհի չեմպիոն Նոնիտո Դոներին, որ եթե մինչեւ օգոստոսի 19-ը մենամարտ չանցկացնի, ապա կզրկվի իր տիտղոսից: Ըստ գործող կարգի, աշխարհի չեմպիոնը պարտավոր է յուրաքանչյուր 4 ամիսը մեկ անգամ տիտղոսի պաշտպանության մենամարտ անցկացնել: Իսկ 6 ամսվա պարապուրդի դեպքում WBC-ի ղեկավարությունն իրավունք ունի տիտղոսը համարել թափուր:

Նոնիտո Դոները WBC-ի եւ WBO-ի վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճել էր փետրվարի 19-ին:

Մյուլլերը հետաքրքրել է «Մանչեսթր Սիթիին»

«Մանչեսթր Սիթին» հետաքրքրվում է Մյունխենի «Բավարիայի» եւ Գերմանիայի հավաքականի հարձակվող Թոմաս Մյուլլերով: Անգլիական ակումբը պատրաստ է նրա տեղափոխման դիմաց մոտ 45 մլն ֆունտ ստեռլինգ վճարել: Մյուլլերին ակումբը 6 տարվա պայմանագիր կառաջարկի, իսկ շաբաթական աշխատավարձը կկազմի 250 հազար ֆունտ ստեռլինգ:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

90 միլիոն դրամ՝ Սանահինի վանական համալիրին

Արդեն մի քանի օր Սանահինի վանական համալիրի անմխիթար վիճակն են բարձրաձայնում «Ցենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունն ու անդամները: Մոտ մեկշաբաթյա լռությունից հետո երեկ մշակույթի նախարարությունը վերջապես արձագանքեց իրեն վերագրվող մեղադրանքներին եւ հայտարարեց, որ համալիրը մոտ ապագայում վերանորոգվելու է:

Նախարարության ուղարկած հաղորդագրության համաձայն՝ վերջին մեկ տարվա ընթացքում Հայ առաքելական եկեղեցին ձեռք է բերել վանական համալիրի նկատմամբ գույքային իրավունքի գրանցման վկայական, գերմանացի մասնագետների խումբը չափագրել է եկեղեցու հարավային ճակատը, որը խախտվել էր նստվածքների պատճառով: Հուշարձանի մասնակի պեղման աշխատանքները կմեկնարկեն աշնանը: Պետբյուջեն նախատեսել է 6 միլիոն դրամ տրամադրել այդ աշխատանքների կատարման համար, իսկ հուշարձանի վերականգնման աշխատանքների համար՝ 90 միլիոն դոլար:

«Իմ ուսանողական տարիներին՝ 1965-1970թթ., գործում էր հուշարձանների վերանորոգման արհեստանոց, որը Հուշարձանների պահպանության պետական գործակալությանը կից կառույց էր: Արհեստանոցի մասնագետները ամառային արձակուրդներին հավաքագրում էին մեզ՝ ուսանողներիս, տարբեր եկեղեցիների ու վանքերի բարեկարգման աշխատանքները կազմակերպելու համար: Այդ կերպ ուսանողները բազմաթիվ վանքեր են բարեկարգել: Ուսանողները բարձրանում էին եկեղեցու գմբեթը, մաքրում բուսականությունից եւ քարերի արանքում լցնում նախապես մեզ տրամադրված քիմիական հատուկ նյութ: Այն ուժեղ ազդեցություն ուներ, եւ մի քանի տարի քարերի վրա բուսականություն չէր աճում», հիշում է «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր **Հակոբ Ավետիքյանը**: Նրա գնահատմամբ՝ փոխանակ խոսքին ուժ տալու, պետք է գործել, օգնել: «Այսօր էլ երիտասարդները կարող են նման նախաձեռնություններ իրականացնել: Անշուշտ, այս հարցում երիտասարդներին պետք է օժանդակեն գերատեսչությունները, նրանց տրամադրեն հագուստ եւ գույք, միջոցներ»:

«Ցենք լռելու»-ն առաջարկում է լռել

«Ցենք լռելու» երիտասարդական կազմակերպությունը facebook սոցիալական ցանցի օգտատերերին խնդրում է վերջ դնել Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ի հրաժարականը պահանջող խմբերի զարգացմանն ու տարածմանը:

«Այդ խմբերի գոյությունը որեւէ օգուտ չի տալու եւ իզուր ջուր է լցնում հակահայկական գործունեությամբ զբաղվող օտարածին կրոնական աղանդների ջրաղացին», ասում է իր ոգեւորությունից նոր ուժի եկած կազմակերպությունը: Հ. Հ.

Նախ հայ, նոր միայն ամերիկացի

Որպես ռուսասանաբնակ հայ կարող եմ զուգահեռներ անցկացնել Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի հայկական կրթական համակարգերի միջեւ: Առավելությունը, անշուշտ, վերջինիս կողմն է: Հայերի դաստիարակության կրթօջախների դրվածքն ու ավանդույթներն այստեղ երկարամյա պատմություն ունեն: Ռուսաստանում ըստ էության ազգային կյանքը զարթնում է 70-ամյա բոլշեւիկյան ընդարմացումից հետո: Եվ այդ ասպարեզում հսկայական է Հայաստանից արտագաղթած հայերի ծառայությունը: Ակտիվ են վրացահայերը, արցախցիները:

Նման խոհեր առաջացան, երբ Երեւանում այցելելով վաղեմի բարեկամիս՝ նրա տանը ծանոթացա Լոս Անջելեսից եկած զարմուհու՝ 16-ամյա Մերի Նաջարյանի հետ: Մայրը հայաստանցի է, հայրը՝ ամերիկահայ, եւ ընդգծված հայկական դիմագծերով գեղեցկատես աղջնակը ազատ խոսում է երկու «լեզվով» էլ՝ արեւելահայերեն ու արեւմտահայերեն: Գերազանցով ավարտել է Լոս Անջելեսի «Հայ քույրերի վարժարանը», դառնալով այդ ուսումնական հաստատության լավագույն շրջանավարտներից մեկը: Ներկայումս սովորում է ամերիկյան դպրոցներից մեկի 11-րդ դասարանում: Ակտիվորեն մասնակցում է համաամերիկյան թե լոսանջելեսյան մակարդակի զանազան ազգային թե եկեղեցական միջոցառումներին:

Մերին Հայաստանում է երրորդ անգամ: Իմ այն «սադրիչ» հարցին, թե նա իրեն հա՞յ է համարում, թե՞ ամերիկացի, դեռատի գեղեցկուհին անվարան պատասխանեց՝ ես նախ հայ եմ, նոր միայն ամերիկացի: Այդպես են իրենց դաստիարակել ծնողները, դպրոցը: Տեղացի տատիկը պատմեց, որ երբ նախորդ այցի ժամանակ Մերին ու իր եղբայրը այցելել են Մեսրոպ Մաշտոցի գերեզման, ապա ի զարմանս «աթեիստ» տատիկի, ծնկի են եկել եւ աղոթել: Հուզմունքից փղձկացի, ասում է տարեց կինը, նորեն պատրաստ նման զգացմունքային զեղման:

Մերիի ներկա այցը մի յուրահատուկ ենթատեքստ ունի: Ամերիկյան դպրոցներում, ասում է նա, գթարտություն են դաստիարակում որբի, հիվանդի, անօգնականի, վշտաբեկ մարդկանց նկատմամբ: Եվ ամառային արձակուրդների ժամանակ ամերիկացի շատ դպրոցականներ մեկնում են զանազան քաղաքական թե բնակլիմայական պատճառների բերումով անբարենպաստ պայմաններում հայտնված երկրներ՝ բնակչությանն օգնակար լինելու նպատակով: «Իմ դասընկերների մի մեծ խումբ, օրինակ, հիմա Կամբոջայում է,- ասեց նա: -Ես ցանկություն հայտնեցի մեկնել իմ հայրենիք, եւ ինձ ընբռնումով ընդառաջ գնացին: Երբ Երեւանի մանկատներից մեկում ինձ ներկայացրին փոքրիկներին ու նրանք մանկական բարի անմիջականությամբ շրջապատեցին ինձ, շփոթվեցի, սակայն հետո ժամերով խաղացինք, երգեցինք, զբոսնեցինք, մտերմացանք: Ամեն առավոտ այցելելով նրանց, զգում եմ, որ սպասում են ինձ: Խոր բավարարվածություն եմ ապրում»:

Հայաստանյան այցելությունների ժամանակ Մերին ձգտում է առավելագույնս ծանոթանալ իր նախնյաց երկրին: Գեղարդում, վերհիշում է նա, երբ քահանան պատմում էր շինության ակուստիկայի մասին, փորձեցի դա «ստուգել» աղոթքով՝ «Հայր մերով», հետո էլ երգեցի ամերիկյան հոգեւոր մի երգ: Տեր հայրը, ուրիշ «ունկնդիրներ» քաջալերեցին ինձ:

Մերին դեռ չի որոշել, թե որտեղ կստանա բարձրագույն կրթություն՝ Հայաստանո՞ւմ, թե՞ Ամերիկայում: Սակայն մի բան նա արդեն հաստատ որոշել է՝ իր ապագա ամուսինը պարտադիր հայ է լինելու: Հայաստանցի թե սփյուռքահայ՝ դա արդեն ուրիշ հարց է, չարաճճիորեն ժպտալով ասում է նա:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅԲԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

1. Կորել է «Ագրոառաքում» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը:
Գրանցման համար՝ 278.070.01073:
Համարել անվավեր:

2. Կորել է «Պտուղբանջարեղեն» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը:
Գրանցման համար՝ 264.120.05130:
Համարել անվավեր:

3. Կորել է «Ագրո-էքսպորտ» ՊՓԲԸ-ի կլոր կնիքը եւ պետռեգիստրի գրանցման վկայականը:
Գրանցման համար՝ 264.120.05125:
Համարել անվավեր:

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության եւ բուժասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ Մամիկոնյանց 39 ա շենքի երրորդ հարկի 280 քառ. մետր ընդհանուր մակերեսի տարածքի կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ կատարելու համար:

Փաստաթղթերը ներկայացնել Մամիկոնյանց 39 ա շենքի 21-րդ սենյակ:

Վերջին ժամկետն է օգոստոսի 1-ը, ժամը 12-ը:

Տեղեկությունների համար զանգահարել 29-36-74, 091-41-39-26 հեռախոսահամարներով:

Տնօրենի ժ/ղ Մ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի դատախազների սպասարկման եւ արարողակարգի վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

դատախազների, վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է վարչության /ՀՀ գլխավոր դատախազության վարչության, բաժնի/ նախապատրաստած՝ դատախազի հրամանների, այլ իրավական ակտերի ու փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակումը, տալիս է եզրակացություններ, վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, զ) գրական հայերենի պատշաճ իմացություն, է) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «4» օգոստոսի 2011թ. :

Մրցույթն անցկացվելու է 2011թ. օգոստոսի 22-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

21.07.2011թ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմի Երեւան քաղաքի դատախազության տարածքային վարչության գլխավոր մասնագետի թափուր պաշտոնի զբաղեցման համար անցկացվող բաց մրցույթի

/Հայաստանի Հանրապետության դատախազության աշխատակազմ/

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.

վարչության պետի հանձնարարությամբ ապահովում է վարչության աշխատանքների վերաբերյալ Երեւան քաղաքի դատախազի նախապատրաստած ցուցումների ու այլ փաստաթղթերի վերաբերյալ մեթոդական պարզաբանումների եւ ուղեցույցների մշակումը, տալիս է եզրակացություններ, նախապատրաստում է անհրաժեշտ նյութեր եւ տեղեկատվություն, մասնակցում է նախապատրաստվող փաստաթղթերի նախագծերի մշակմանը, ապահովում է դատախազությունում ստացվող փաստաթղթերի գրանցումը եւ հանձնումը հասցեատերերին, իրականացնում է քաղաքի դատախազության եւ վարչության փաստաթղթային սպասարկումը, փաստաթղթաշրջանառության վարման աշխատանքները, դատախազությունից առաքվող փաստաթղթերի եւ գործերի գրանցումն ու առաքումը, պատասխանատվություն է կրում գործավարություն իրականացնելիս ստացված տեղեկատվության ամբողջականության, հավաստիության համար, մասնակցում է վարչության աշխատանքի ծրագրի մշակմանը, վարչության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, զեկուցագրեր եւ այլ գրություններ, ինչպես նաեւ օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված իր լիազորություններից բխող այլ գործառույթներ իրականացնելը եւ այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ (սահմանափակումներ) կրելը:

ՀՀ դատախազության աշխատակազմում պետական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով սահմանված պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների տիրապետման վերաբերյալ ներկայացվող պահանջները.

ա) բարձրագույն իրավաբանական կամ այլ մասնագիտական բարձրագույն կրթություն, բ) դատախազական (պետական) ծառայության պաշտոններում երկու տարվա ստաժ կամ դատախազական ծառայության առնվազն 1-ին դասի կրտսեր ծառայողի դասային աստիճան կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ, գ) իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաեւ տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, դ) անհրաժեշտ գիտելիքներ եւ տեղեկատվություն իր սպասարկման բնագավառի մասին, ե) համակարգչով եւ ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն, զ) գրական հայերենի պատշաճ իմացություն, է) առնվազն մեկ օտար լեզվի իմացություն:

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետն է «4» օգոստոսի 2011թ. :

Մրցույթն անցկացվելու է 2011թ. օգոստոսի 22-ին ժամը «11:00»-ին ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5/ :

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացվում են ՀՀ գլխավոր դատախազության շենքում /ք.Երեւան, Վ.Սարգսյան 5, հեռախոս 511-627/ :

21.07.2011թ.

ԳՈՎԱԶԳԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ավետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 20.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: